Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:
Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝
https://grqaser.org/hy/donate
Անգլիական գրականություն, Բրիտանական գրականություն, Արձակ, Պատմվածք 13+
Անգլերենից թարգմանեց Ռուզան Թոփչյանը

# Դեյվիդ Լոուրենս
# Կինը, որ ձի նստեց ու գնաց

1
Կինը երևակայել էր, թե հնարավոր ամուսնություններից թերևս այս մեկն էր արկած լինելու: Ոչ այն պատճառով, որ տղամարդն էր գերել իրեն: Փոքրամարմին, ամրակազմ, ճարպիկ, կնոջից քսան տարով մեծ, շագանակագույն աչքերով և ալեխառն մազերով մի անձնավորություն, որը տարիներ առաջ, փոքրիկ տղա, իրենից ոչինչ չներկայացնելով, Հոլանդիայից Ամերիկա էր եկել, արևմուտքի ոսկու հանքերից հարավ՝ Մեքսիկա շպրտվել և հիմա Սիերա Մադրեի թավուտներում արծաթի հանքերով քիչ թե շատ հարուստ էր. ակնհայտ էր, որ ավելի շուտ նրա կյանքի պայմաններն էին արկածային, քան անձը՝ արկածախնդիր: Բայց նա չէր դադարում էներգիայի մի փոքրիկ մարտկոց լինել, չնայած գլխով անցած-դարձածին, և ինչի որ հասել էր, մենակ էր հասել: Մեկը մարդկության անըմբռնելի բեկորներից:

Երբ կինը տեսավ ամուսնու ձեռքբերումները, սիրտը ճմլվեց: Հսկա, կանաչավուն, հոծ սարակերպ բլուրներ, և այդ անկյանք մեկուսացվածության կենտրոնում արծաթի հանքերից հանած կավի չորացած, սրածայր, կարմրին տվող թմբեր: Լերկ հանքերի կողքին կավաշեն, միհարկանի պարսպապատ տուն, շուրջը՝ պարտեզ, ապակեծածկ խոր պատշգամբ, որի երկու կողմերից արևադարձային բույսեր էին մագլցում: Այդ գողտրիկ, ծաղկուն ներքնաբակից վեր նայելիս երկնքի հիմնագույնին արծաթացեխի թափոնի հսկա, վարդագույն բուրգն էր երնում ու արդյունահանող մեքենաները: Ուրիշ ոչինչ:

Իհարկե, փայտե հսկա դարպասները հաճախ էին բաց լինում: Եվ այդ ժամանակ կինը կարող էր կանգնել դրսում՝ անծայրածիր, արձակ աշխարհում և նայել հսկա, ամայի, ծառածածկ, շարվեշարան անսկիզբ ու անվերջ բլուրներին: Աշնանը դրանք կանաչ էին լինում: Տարվա մնացած մասը՝ կարմրավուն, լրիվ չորացած ու վերացական:

Իր հնամաշ «Ֆրոդով» ամուսինը կնոջը մեռած, երիցս մեռած, սարերի մեջ մոռացված փոքրիկ իսպանական քաղաքն էր տանում, արևառ հսկա, ամայի մուտքեր, չգործող եկեղեցի, բարձիթողի ծածկած շուկա, ուր առաջին իսկ օրը կինը մսի վաճառասեղանի ու բանջարեղենի կույտի արանքում սատկած շուն էր տեսել, որն ասես ընդմիշտ մնալու էր

այնտեղ. ոչ ոք իրեն նեղություն չէր տալիս դեն նետել լեշը: Անկենդանություն՝ անկենդանության մեջ:

Մարդիկ արծաթի մասին անորոշ բաներ էին պատմում և հանքաքարի կտորներ ցույց տալիս: Արծաթի գործը փակուղի էր մտել: Եկել-գնացել էր մեծ պատերազմը: Արծաթի գինն ընկել էր: Ամուսնու հանքերը փակվել էին: Բայց նրանք շարունակում էին ապրել հանքերի կողքի կավաշեն տանը, ծաղիկների մեջ, որոնք կնոջը երբեք երփներանգ չէին թվում:

Կինը երկու երեխա ուներ տղա ու աղջիկ: Ավագը՝ որդին, տասը տարեկան էր դառնում, երբ կինն արթնացավ զարմանքի ընդարմացումից: Հիմա նա երեսներեքամյա, կապուտաչ, զարմացած, գիրացող, խոշոր կին էր: Նրա փոքրամարմին, մկանուտ, ամրակազմ, ճարպիկ, շագանակագույն աչքերով ամուսինը հիսուներեք տարեկան էր, մետաղալարի պես ճկուն, մետաղալարի պես դիմացկուն, դեռևս եռանդով լի. բայց շուկայում արծաթի գնի անկումից ու կնոջ տարօրինակ անհասանելիությունից բթացած:

Նա սկզբունքային մարդ էր և լավ ամուսին: Կնոջը յուրովի պաշտում էր: Երբեք լիովին չհաղթահարեց նրա նկատմամբ տածած ծայրահեղ հիացմունքը: Բայց, ըստ էության, նա դեռ ամուրի էր: Փոքրիկ մի ամուրի, աշխարհ էր նետվել տասը տարեկան հասակում: Երբ ամուսնացավ, քառասունն անց էր և ամուսնանալու համար բավարար դրամ ուներ: Բայց նրա ողջ կարողությունն ամուրու կարողություն էր: Նա սեփական հանքերի տերն էր, իսկ ամուսնությունը նրա հանքերի վերջին ու ամենաթաքուն մասն էր կազմում:

Նա նվաղելու չափ հիացած էր կնոջով, նրա մարմնով, բնավորության գծերով: Եվ նրա համար կինը չէր դադարում Բերկլիից եկած կալիֆորնիացի այն ապշեցուցիչ աղջնակը լինել, որին տեսել էր առաջին անգամ: Ամուսինը շեյխի պես հսկում էր կնոջը Չիհուահուայի այդ սարերում: Հսկում էր զգաստաբար, ինչպես արծաթի հանքը, այսինքն՝ խիստ:

Երեսուներեք տարեկանում կինն իսկապես դեռ Բերկլիից եկած այն աղջնակն էր, կազմվածքը չհաշված:

Ամուսնանալով՝ կնոջ գիտակցական զարգացումը խորհրդավոր կերպով կանգ էր առել, լիովին կասեցվել: Ամուսինը նրա համար երբեք իրական չդարձավ, ոչ մտովի, ոչ էլ ֆիզիկապես: Չնայած կնոջ հանդեպ տածած կրքին՝ նրա համար երբեք նշանակություն չունեցավ: Միայն բարոյապես էր նրա վրա իշխում, իրեն ենթարկում՝ պահելով անհաղթահարելի ստրկության մեջ:

Այսպես էին անցնում տարիները արնոտ ներքնաբակով շրջապատված կավաշեն տանը, արծաթի հանքերի հարևանությամբ: Ամուսինը ոչ մի վայրկյան դադար չուներ: Երբ արծաթի գինն ընկավ, նա ներքևում՝ մոտ քսան մղոն հեռավորության վրա ռանչո ձեռք բերեց ու սկսեց ցեղական խոզեր բուծել՝ հիանալի կենդանիներ: Միևնույն ժամանակ խոզերից զզվում էր: Նա մի բծախնդիր թափառական իդեալիստ էր և կյանքի նյութական կողմն իսկապես ատում էր: Նա սիրում էր գործ, գործ, գործ ու բաներ ստեղծել: Նրա ամուսնությունը, երեխաները բաներ էին, որ ստեղծում էր, նրա բիզնեսի մի մասը, բայց այս անգամ եկամուտը զգացմունքային էր:

Հետզհետե կնոջ ջղերը սկսեցին քայքայվել. ինքը պետք է դուրս գար: Պետք է դուրս գար: Եվ ամուսինը նրան երեք ամսով Էլ Փասո տարավ: Դա Էլի գոնե Միացյալ Նահանգներում էր:

Բայց ամուսինը շարունակում էր կնոջ վրա իշխել: Երեք ամիսը լրացավ: Կինը վերադարձավ: Նորից նույնը. հավերժ կանաչ կամ վարդաշագանակագույն բլուրների մեջ գտնվող կավաշեն իր տունը՝ ամայի, ինչպես աշխարհի հայտնագործումից առաջ: Կինն իր զավակների հետ էր պարապում, մեքսիկացի ծառաներին հսկում: Իսկ ամուսինը երբեմն այցելուներ էր բերում՝ իսպանացիներ կամ մեքսիկացիներ, հազվադեպ՝ սպիտակամորթներ:

Ամուսնուն անկեղծորեն դուր էր գալիս իր տանը սպիտակամորթներին հյուրընկալելը, մինչդեռ հանգստի պահ անգամ չուներ, երբ այնտեղ էին լինում: Բանն այն է, որ կինն ասես նրա հանքում հանքաքարի յուրատեսակ գաղտնի երակ լիներ, որի մասին իրենից բացի ոչ ոք

չպետք է իմանար: Իսկ կնոջը հիացմունք էին պատճառում ամուսնուն ժամանակ առ ժամանակ հյուր եկած երիտասարդ ջենտլմենները, հանքագործ ինժեներները: Իսկական ջենտլմենը ամուսնուն էլ էր հիացնում: Բայց նա կին ունեցող հնավանդ հանցագործ էր, և եթե ջենտլմենը կնոջն էր նայում, ամուսնուն թվում էր, թե թալանում են հանքը, դուրս կորզում գաղտնիքները:

Այս երիտասարդ ջենտլմեններից մեկը պատճառ դարձավ, որ կնոջ գլխում ծագի այդ միտքը: Բոլորը ներքնաբակի հսկայական փայտե դարպասների մոտ կանգնած դրսի աշխարհին էին նայում: Հավերժ, անկյանք բլուրներն ամբողջովին կանաչ էին, սեպտեմբեր ամիսն էր, անձրևները նոր էին դադարել: Լքված հանքավայրից, լքված հանքից ու հանքափորների կիսաամայի տներից բացի ոչինչ չկար:

— Հետաքրքիր է. այդ հսկա, անկյանք բլուրների ետևում ի՞նչ կա,— հարցրեց երիտասարդը:

— Էլի բլուրներ,— պատասխանեց Լեդերմանը:— Եթե այդ կողմը գնաք՝ Սոնորան և ափն են: Այն կողմը անապատն է, դուք այնտեղից եկաք, իսկ հակառակ կողմում բլուրներ ու սարեր են:

— Պարզ է, բայց ովքե՞ր են բնակվում այդ բլուրներում ու սարերում: Այնտեղ անկասկած ինչ-որ զարմանահրաշ բան կա: Բոլորովին նման չէ երկրագնդի, ասես լուսնի վրա լինի:

— Առատ որս, եթե կրակել եք ուզում: Եվ հնդկացիներ, եթե նրանց զարմանահրաշ եք անվանում:

— Վայրենի՞:

— Բավական վայրենի:

— Բայց բարեկամաբար տրամադրված:

— Նայած: Որոշ մասը լիովին վայրենի է և ոչ ոքի մոտ չի թողնում: Տեսնելուն պես սպանում է միսիոներին: Իսկ ուր միսիոները չի կարող գնալ, ուրեմն ոչ ոք չի կարող:

— Իսկ կառավարությունն ի՞նչ է անում:

— Հնդկացիներն ամեն տեղից այնքան հեռու են, որ կառավարությունը նրանց հանգիստ է թողնում: Բացի այդ նրանք խորամանկ են, հենց զգում են անախորժություն է լինելու, պատգամավոր են ուղարկում Չիհուահուա և ձևական հնազանդություն հավաստում: Կառավարությունը ուրախությամբ ձեռք է քաշում նրանցից:

— Մի՞թե նրանք ամբողջովին վայրենի կյանք են վարում, իրենց վայրենի սովորություններն ու պաշտամունքն ունեն:

— Օ՜, այո՜: Միայն նետ ու աղեղ են գործածում: Քաղաքի հրապարակում տեսել եմ նրանց, ինչ-որ ծիծաղելի, ծաղկազարդ գլխարկներով, մի ձեռքում՝ նետ, մորեմերկ, միայն ինչ-որ շապիկ հագած, անգամ ցուրտ եղանակին՝ վայրենի, ոտաբոբիկ թափառելիս:

— Բայց չե՞ք կարծում, որ վերևում՝ նրանց մեկուսի գյուղերում հրաշք կա:

— Ոչ: Ի՞նչ հրաշք կարող է լինել այստեղ: Վայրենին վայրենի է, և բոլոր վայրենիները քիչ թե շատ նույն վարքագիծն ունեն՝ բավական անազնիվ ու կեղտոտ, հակահիգիենիկ, մի քանի խաբեբա արարք և կռիվ՝ բավարար սնունդ հայթայթելու համար:

— Բայց նրանք անկասկած հնամենի պաշտամունքներ և գաղտնիքներ ունեն. դա պետք է հրաշալի լինի, անպայման պետք է հրաշալի լինի:

— Գաղտնիքների մասին չգիտեմ, բայց աղաղակներն ու բարբարոսական ծեսերը բոլորն էլ հրեշավոր են: Ոչ, այստեղ ես որևէ հրաշալի բան չեմ տեսնում: Եվ զարմանում եմ, որ տեսնում եք դուք, երբ Լոնդոնում, Փարիզում կամ Նյու Յորքում եք բնակվել...

— Դե, բոլորն էլ բնակվում են Լոնդոնում, Փարիզում կամ Նյու Յորքում...,— ասաց երիտասարդը, համոզիչ հնչերանգով:

Եվ անհայտ հնդկացիների հանդեպ այս առանձնահատուկ, աղոտ խանդավառությունը լիովին արձագանք գտավ կնոջ սրտում: Նրան տիրեց աղջկականից ավելի անիրական՝ խելացնոր, երազական հայեցողությունը: Նրան թվաց, թե իր ճակատին գրված էր հասնել ժամանակից դուրս, սարերում ապրող այդ խորհրդավոր, զարմանահրաշ հնդկացիների գաղտնի ապաստանները:

Կինը դա գաղտնի պահեց: Երիտասարդը մեկնում էր, ամուսինն էլ նրա հետ գործով Թորեոն էր իջնում, մի քանի օր բացակայելու էր տնից: Բայց կինն ամուսնուն մեկնելուց առաջ ստիպեց, որ պատմի հնդկացիների մասին՝ դեռևս ազատ թափառող նավայո ցեղը հիշեցնող քոչվորների, Սոնորայի յաքիների և Չիհուահուայի նահանգի հովիտներում ապրող տարբեր խմբերի մասին:

Ենթադրվում էր, որ ցեղը մեկն է՝ հարավային հովտում բնակվող չիլչուիները, որ հնդկացիների սրբազան ցեղն էր: Նրանց մեջ դեռ ապրում էին Մոնթեսումայի և հին ացտեկ կամ տևտոն թագավորների հետնորդները, իսկ ծեր քրմերը դեռ պահպանում էին հին պաշտամունքը և մարդկային զոհեր մատուցում. այսպես էին ասում: Որոշ գիտնականներ եղել էին չիլչուիների երկրում ու վերադարձել քաղցից, ծանր զրկանքներից հյուծված ու հոգնաբեկ՝ բերելով իրենց հետ պաշտամունքի բազմաթիվ տարօրինակ, հեթանոսական առարկաներ, բայց վայրենիների քաղցած, անպտուղ գյուղերում ոչ մի արտասովոր բան չտեսած:

Չնայած Լեդերմանն այդպիսի արհամարհանքով էր խոսում, ակնհայտորեն հին ու խորհրդավոր բարբարոսների մասին միտքը կնոջ մեջ մի տեսակ բիրտ գրգիռ էր առաջացնում:

— Ինչքա՞ն են հեռու նրանք,— հարցրեց նա:

— Օ՛, ձիով երեք օր՝ Քուչիթիի և վերևում գտնվող լճակի մոտով:

Ամուսինն ու երիտասարդը մեկնեցին: Կինը կազմեց իր խելահեղ ծրագիրը: Վերջերս կյանքի միօրինակությունը խախտելու համար նա անընդհատ համոզում էր ամուսնուն, որ թույլ տա երբեմն ձիով զբոսնել: Կնոջը արգելված էր տնից մենակ դուրս գալ: Գյուղն իսկապես ապահով չէր, անկարգ էր ու դաժան:

Բայց կինն իր ձին ուներ և երազում էր Կալիֆորնիայի բլուրներում ազատ լինել, ինչպես աղջիկ ժամանակ: Նրա իննամյա դուստրը հիմա իսպանացի հանքափորների կիսալքված քաղաքի մի փոքրիկ վանքում էր՝ հինգ մղոն հեռու:

— Մանուել,— դիմեց կինը տան սպասավորին,— ձիով վանք եմ գնալու Մարգարիտային տեսնելու: Հնարավոր է՝ գիշերեմ այնտեղ: Մինչև վերադառնամ, հոգ տարեք Ֆրեդիի մասին և հետևեք, որ ամեն բան կարգին լինի:

— Ե՞ս եմ ուղեկցելու ձեզ տիրոջ ձիով, թե՞ Ջուանը,— հարցրեց սպասավորը:

— Ոչ դուք, ոչ նա: Ես մենակ եմ գնում:

Երիտասարդը բողոքող հայացքը կնոջ աչքերին հառեց: Բացարձակապես անհնար բան, որ կինը մեն-մենակ ձիավարեր:

— Ես մենակ եմ գնում,— տիրական շեշտով կրկնեց խոշոր, անվրդով թվացող սպիտակամորթ կինը: Եվ տղամարդն անձայն, վիատ տեղի տվեց:

— Ինչո՞ւ ես մենակ գնում, մայրիկ,— հարցրեց որդին, երբ կինը փաթաթեց ուտելիքը:

— Մի՞թե ես երբեք չպետք է մենակ մնամ: Կյանքումս մի վայրկյան անգամ,— հանկարծ պոռթկաց կինը:

Եվ տղան, ինչպես սպասավորը, լուռ տեղի տվեց:

Կինը ճանապարհ ընկավ առանց վարանելու, իր ամրակազմ չալ ձին հեծած, հագին ձիավարի քաթանե կոպիտ կոստյում. քաթանե հեծելաշալվարի վրա՝ ձիավարի շրջազգեստ, ճերմակ վերնաշապիկին՝ կարմիր փողկապ, գլխին՝ սև նրբաթաղիքե գլխարկ: Խուրջիններում ուտելիք կար, զինվորական տափաշշով ջուր, իսկ թամբի ետևում բրդյա մի լայն ծածկոց էր կապած: Կինը հեռացավ տանից՝ հայացքը հեռուները հառած: Մանուելն ու որդին կանգնեցին դարպասի մեջ՝ կանգնեցին նրա ետևից նայելու: Կինն անգամ չշրջվեց, որ իբրև հրաժեշտի նշան ձեռքով անի:

Բայց երբ մի մղոն անցել էր, թողեց վանքի ճանապարհը և բռնեց դեպի աջ տանող մի փոքրիկ արահետ, որը զառիթափ վայրերով, հսկա ծառերի մոտով ու հանքափորների մեկ այլ լքված բնակատեղիի միջով դեպի հովիտ էր տանում: Սեպտեմբերն էր, լքված հանքը մի ժամանակ ջրած փոքրիկ վտակը ազատ հոսում էր: Կինը ձիուց իջավ ջուր խմելու և թողեց, որ ձին էլ խմի:

Հեռվում, զառիթափին, ծառերի միջով մոտեցող բնիկներ տեսավ: Նրան նկատել էին և ուշադիր հետևում էին: Կինն էլ սկսեց հետևել: Այդ երեքը՝ երկու կին ու երիտասարդը, հեռվից էին շրջանցում, որ շատ չմոտենան: Կնոջ համար միևնույն էր: Ձին հեծնելով, նա վարգով ուղիղ խաղաղ հովիտն ի վեր քշեց, արծաթի հանքարանից հեռու, հանքային արդյունաբերություն հիշեցնող ամեն բանից հեռու: Ժայռերի ու շարժվող քարերի մյուս կողմի հովիտը տանող մի դժվարանցանելի շավիղ դեռ մնում էր: Այս շավիղը նա մի անգամ անցել էր՝ ամուսնու հետ: Դրանից հետո գիտեր, որ հարավ է գնալու:

Տարօրինակ էր, բայց նա չէր վախենում, թեպետ գյուղը երկյուղալի էր՝ խաղաղ, ճակատագրական թվացող սարալանջեր, ծառերի մեջ՝ հատուկենտ, չմոտեցող, կասկածելի, խուսափող բնիկներ, կենդանի դիակի, ռանչոյի, կամ մի քանի հյուղակների վերևում մերթընդմերթ սավառնող, խոշոր ճանճեր թվացող գիշակեր թռչուններ: Քանի վեր էր բարձրանում, ծառերը նոսրանում էին, շավիղը ձգվում էր կանաչ պատատուկով ու հատուկենտ կարմիր ընձյուղներով պատված փշոտ թփուտների միջով: Հետո այս գունավոր բույսերը վերջացան: Նա սոճիներին էր մոտենում:

Ժայռի կատարը կնոջ ոտքերի տակ էր, իսկ առջևում՝ մեկ ուրիշ խաղաղ, ամայի, կանաչազարդ հովիտ: Կեսօրն անց էր: Ձին ուղղություն վերցրեց դեպի փոքրիկ վտակը, այնպես որ կինը ձիուց իջավ նախաճաշելու: Նա լուռ նստեց ու նայեց խաղաղ, անկյանք հովտին, հարավում, մինչև ժայռն ու սոճիները բարձրացող սրածայր բլուրներին: Կինը երկու ժամ հանգստացավ կեսօրվա տապին, քանի դեռ ձին կողքին արածում էր: Հետաքրքիր էր, նա ոչ վախ էր զգում, ոչ էլ մենություն: Իրոք որ մենությունն ասես մի կում ջուր լիներ սաստիկ ծարաված մարդու համար: Եվ նա ներքուստ տարօրինակ հրճվանք ապրեց:

Նա շարունակեց ճանապարհը և գիշերեց առվակի ափին, բարձր թփերի մեջ: Նա անասուններ էր տեսել ու բազմաթիվ շավիղներ կտրել: Մոտակայքում պետք է, որ ռանչո լիներ: Կնոջ ականջին հասնում էր լեռնային առյուծի տարօրինակ մռնչյունը և շների պատասխան հաչոցը: Բայց փոքրիկ խարույկի կողքին, ծածուկ փոսում նստած կինը իսկապես չէր վախենում: Նրան չէր դադարում սատարել հոգին ալեկոծող տարօրինակ հրճվանքը:

Արևածագից առաջ սաստիկ ցրտեց: Ծածկոցի մեջ փաթաթված կինը հայացքը հառել էր աստղերին, ականջը՝ ձիու ցնցումներին և իրեն մեռած ու աշխարհից հեռացած էր զգում:

Նա համոզված չէր, թե գիշերվա ընթացքում իր սրտում սաստիկ դղրդյուն չէր լսել, որը սեփական մահվան դղրդյունն էր: Կամ գուցե դղրդյունը երկրագնդի կենտրոնից էր լսվել և ինչ-որ մեծ ու խորհրդավոր բան էր նշանակում:

Լույսի առաջին շողի հետ ցրտից ընդարմացած կինը վեր կացավ ու խարույկ վառեց: Հապճեպ նախաճաշեց, ձիուն ձիթաբույսի սերմից պատրաստված մի քանի թխվածքաբլիթ տվեց և նորից ճանապարհ ընկավ: Նա հանդիպումից խուսափում էր, և քանի որ ոչ ոքի չէր հանդիպում, ակնհայտ էր, որ նրանից էլ էին խուսափում: Վերջապես երևացին Քուչիթի գյուղի սև տների կարմրավուն տանիքները, մռայլ, անուրախ տնակների մի կույտ մեկ ուրիշ խաղաղ, վաղուց լքված հանքի ներքևում: Իսկ դրանից այն կողմ՝ երկար, հսկա սարալանջ, որը սոճիների մուգ ու խավար կանաչի համեմատ քանի բարձրանում՝ բաց երանգ էր ստանում: Իսկ սոճիներից այն կողմ երկնքի հենքին՝ լերկ ժայռահատվածներ, արդեն շերտատված և տեղ-տեղ ճերմակ ձյունով ծածկված: Իսկ ամենավերևում սկսել էր ձյուն տեղալ:

Եվ հիմա, երբ կինը քիչ թե շատ իր նպատակին էր մոտենում, սկսեց անորոշության մեջ ընկնել ու երկնչել: Նա անցել էր ճերմակամորթ կանանց կլոր ու բարեձև թևեր հիշեցնող բներով դեղնող կաղամախիները որ շրջապատում էին լճակը: Ի՜նչ գեղեցիկ վայր էր: Կալիֆորնիայում ինքը դրա մասին կերազեր: Իսկ հիմա նայում էր, տեսնում, որ գեղեցիկ է, բայց անտարբեր էր: Նա հոգնել ու սպառվել էր բաց երկնքի տակ անցկացրած երկու գիշերներից և գալիք գիշերվա համար երկյուղ էր ապրում:
Նա չգիտեր, թե ուր էր գնում և ինչի համար: Ձին դժվարությամբ էր ոտքերը քարշ տալիս դեպի այդ հսկա, սպառնալի սարալանջը տանող քարքարոտ, նեղլիկ շավիղով: Եվ եթե կնոջ մեջ մի քիչ ինքնատիրապետում մնացած լիներ, կդառնար ետ՝ գյուղ, որ իրեն պաշտպանեն և ուղարկեն տուն՝ ամուսնու մոտ:

Բայց նա ինքն իրեն չէր տիրապետում: Ձին, ջուրը ցայտեցնելով, անցավ առվակը և հայտնվեց հսկա, դեղնող կաղամախիներից ներքև ընկած մի հովտում: Կինը պետք է, որ ծովի մակերևույթից մոտ ինը հազար ոտնաչափ բարձրության վրա լիներ, նրա գլուխը բարձրությունից ու հոգնածությունից պտտվում էր: Կաղամախիների ետևում, երկու կողմերում նրան շրջափակող թեք, մեկը մյուսից վեր գտնվող դողդոջուն կաղամախիներով զարդարված սարալանջերն էին երևում, իսկ ավելի վերևում՝ սրագագաթ եղևնիներն ու սոճիները: Ձին առաջ էր շարժվում մեքենայաբար: Այդ անանցանելի հովտում, այդ նեղ կածանով ուրիշ գնալու տեղ չկար, միայն առաջ ու վեր:

Հանկարծ ձին ծառս եղավ, և մուգ թիկնոցներով երեք տղամարդ հայտնվեցին կնոջ առաջ:

— Adios!,- հնդկացու լիահունչ, զսպված ձայնով հնչեց ողջույնը:

— Adios!,- ամերիկուհուն հատուկ վստահ ձայնով պատասխանեց կինը:

— Ո՞ւր եք գնում,— իսպաներեն հնչեց հանդարտ հարցը:

Մուգ թիկնոցներով տղամարդիկ ավելի էին մոտեցել ու կնոջն էին զննում:

— Ոհ, առաջ,— սաքսոնական իսպաներենով սառը պատասխանեց կինը:

Կնոջ համար սրանք ընդամենը բնիկներ էին՝ թխադեմ, ամրակազմ, մուգ թիկնոցներով ու ծղոտե գլխարկներով տղամարդիկ: Նրանք ոչնչով չէին տարբերվի ամուսնու մոտ աշխատող տղամարդկանցից, եթե, տարօրինակ բան, չլինեին՝ ուսերին թափվող երկար, սև մազերը: Այդ երկար, սև մազերը կինը որոշակի տհաճությամբ նկատեց: Սրանք պետք է այն վայրենի հնդկացիները լինեին, որոնց եկել էր տեսնելու:

— Որտեղի՞ց եք գալիս,— հարցրեց նույն տղամարդը: Խոսողը միշտ նույն տղամարդն էր: Նա երիտասարդ էր, սրաթափանց, խոշոր, փայլուն, սևորակ աչքեր ուներ, որոնք կնոջ վրա խեթ հայացք էին նետում: Նրա թուխ դեմքին սև, փափուկ բեղ կար և մորուքի նոսր մի խուրձ՝

ծնոտից կախ ընկած: Նրա երկար, սև, փարթամ մազերն անկարգ թափված էին ուսերին: Նա այնպես թուխ էր, ասես երկար ժամանակ լվացված չլիներ:

Երկու ուղեկիցները նման էին նրան, միայն ավելի տարեց էին, ուժեղ ու անխոս: Մեկի բեղը մի բարակ, սև գիծ էր, բայց մորուք չուներ: Մյուսը հնդկացիներին հատուկ հարթ այտեր և կզակն ընդգծող նոսր, մուգ մորուք ուներ:

— Հեռու հեռվից եմ գալիս,— կեսկատակ, խուսափողական պատասխանեց կինը:

Պատասխանն ընդունվեց լռությամբ:

— Բայց որտե՞ղ եք բնակվում,— նույն հանդարտ համառությամբ հարցրեց երիտասարդը:

— Հյուսիսում,— անհոգ՝ պատասխանեց կինը:

Դարձյալ մի պահ լռություն: Երիտասարդը հնդկացիների լեզվով խոսեց երկու ուղեկիցների հետ:

— Այս ճանապարհով ո՞ւր եք ուզում գնալ,— մարտահրավերով հանկարծ հարցրեց երիտասարդը, կտրուկ մատնացույց անելով վեր տանող ճանապարհը:

— Չիլչուի հնդկացիների մոտ,— կարճ ու կտրուկ պատասխանեց կինը:

Երիտասարդը նրան նայեց: Նրա աչքերը սրաթափանց, սևորակ ու դաժան էին: Երեկոյան լույսի ներքո կնոջ բավական լայն, խաղաղ, թարմ դեմքին նա անվստահության թեթև, կիսատ աչքերի ժպիտ տեսավ, խոշոր, երկնագույն աչքերի տակ՝ հոգնածությունից կապտավուն շրջանակներ, իսկ աչքերում, երբ կինը նրան էր նայում, սեփական կանացի ուժի կիսամանկական, կիսամանկամիտ վստահություն: Բայց կնոջ աչքերում անդենականի տարօրինակ արտահայտություն էլ կար:

— Usted es Senora: Դուք լեդի՞ եք,— հարցրեց հնդկացին:

— Այո, լեդի եմ,— ինքնագոհ պատասխանեց կինը:

— Ընտանիք ունե՞ք:

— Ամուսին և երկու զավակ՝ տղա ու աղջիկ:

Հնդկացին ուղեկիցների կողմը շրջվեց ու թարգմանեց ցածր, գեղգեղուն ձայնով, ասես գետնի տակ ջուր էր հոսում: Նրանք ակնհայտորեն տարակուսանքի մեջ էին:

— Որտե՞ղ է ձեր ամուսինը,— հարցրեց երիտասարդը:

— Ո՞վ գիտե,— անհոգ պատասխանեց կինը:— Մի շաբաթով գործով տեղ է գնացել:

Մթին, սրաթափանց աչքերը հետևում էին նրան: Չնայած հոգնածությանը. կինը մեղմ ժպտաց, սեփական արկածով հպարտ, իր կանացիության մեջ համոզված ու խենթությամբ համակված:

— Իսկ դուք ի՞նչ եք ուզում անել,— հարցրեց հնդկացին:

— Ուզում եմ այցելել Չիլչուի հնդկացիներին, տեսնել նրանց տներն ու ծանոթանալ նրանց աստվածներին,— պատասխանեց կինը:

Երիտասարդը շրջվեց ու արագ թարգմանեց: Լռություն տիրեց, ասես սոսկումից: Ավելի տարեց, մռայլադեմ տղամարդիկ իրենց զարդարված գլխարկների տակից կնոջ վրա խեթ ու

անտարբեր հայացք էին նետում և երիտասարդին ինչ-որ բան ասացին թավ, կրծքային ձայնով:

Վերջինս դեռ տատանվում էր: Հետո դարձավ կնոջը:

— Բարի: Գնանք: Բայց միայն վաղը կհասնենք: Այս գիշեր ստիպված կլինենք կանգ առնել:

— Լավ,— ասաց կինը,— կանգառին դեմ չեմ:

Առանց հետագա ձևականությունների, մեծ արագությամբ նրանք սկսեցին բարձրանալ քարքարոտ շավղով: Երիտասարդ հնդկացին կնոջ ձիու կողքից էր գնում, մյուս երկուսը՝ ետևից: Նրանցից մեկը մի հաստ ճիպոտ էր վերցրել և ժամանակ առ ժամանակ ձիու ազդրին շառաչուն հարված էր հասցնում ընթացքն արագացնելու համար: Ձին ոստնում էր և թամբի վրա ետ գցում կնոջը: Հոգնած կնոջը սա բարկացրեց:

— Մի արեք,— տղամարդու կողմը շրջվելով՝ զայրույթով գոռաց կինը:

Նրա աչքերը հանդիպեցին տղամարդու մթին, խոշոր, փայլուն աչքերին, և առաջին անգամ կինն իսկապես երկյուղ զգաց: Տղամարդու աչքերը մարդկային չթվացին և նրա մեջ գեղեցիկ ճերմակամորթ կին չէին տեսնում: Տղամարդը նրան էր նայում սևորակ, փայլուն աչքերի անմարդկային հայացքով և նրա մեջ ընդհանրապես կին չէր տեսնում: Ասես կինն ինչ-որ տարօրինակ, անբացատրելի իր էր, անըմբռնելի, բայց թշնամական: Թամբին նստած կինը զարմանք կտրեց ու մեկ անգամ ևս իրեն ասես մեռած զգաց: Եվ նորից տղամարդը հարվածեց ձիուն և սաստիկ ցնցեց թամբին նստած կնոջը:

Նրա մեջ գլուխ բարձրացրեց երես առած ճերմակամորթ կնոջ ողջ անսանձ զայրույթը: Սանձը ձգելով, կանգնեցրեց ձիուն և շանթալից հայացքն իր ձիու երասանը բռնած տղամարդուն հառեց:

— Ասացեք այդ մարդուն, ձիուս հանգիստ թողնի,— բղավեց կինը:

Կնոջ աչքերը հանդիպեցին երիտասարդի աչքերին, և նրանց պայծառ, սև խորհրդավորության մեջ հեգնանքի թույլ կայծ նշմարեց, ինչպես օձի աչքերում: Երիտասարդը հնդկացիներին հատուկ ցածր ձայնով դիմեց ետևից եկող ուղեկցին: Ճիպոտով մարդը լսում էր առանց նայելու: Հետո տարօրինակ, ցածր ձայնով ձիուն կանչելով՝ նորից հարվածեց գավակին, այնպես որ ձին ջղակծկմամբ քարքարոտ շավիղն ի վեր ոստնեց՝ ցրիվ տալով քարերը, թամբի վրա վեր-վեր թռցնելով հոգնած կնոջը:

Կնոջ աչքերում խելագարության հասնող զայրույթ բռնկվեց, նա սաստիկ վախեցավ: Կատաղած քաշեց սանձը, բայց չհասցրեց շրջել ձիու գլուխը, քանի որ երիտասարդ հնդկացին արդեն բռնել էր սանձը, կտրուկ առաջ էր ձգել և ընթանում էր վարգով՝ առաջնորդելով ձիուն:

Կինն այլևս ուժ չուներ: Եվ սաստիկ զայրույթի հետ թեթև ցնծություն ապրեց: Գիտեր, որ ինքը մեռած է:

Արևը մայր էր մտնում, առատ դեղին լույսը վերջին անգամ ողողեց դողդոջուն կաղամախիները, փայլկտաց սոճիների բներին, սոճիների փշերը ցից-ցից տնկվեցին ու մութ փայլ ստացան, ժայռերը խորհրդավոր լուսավորվեցին: Եվ այդ փայլի միջով ձիու առջևից գնացող հնդկացին վարգով անխոնջ առաջ էր արշավում: Մուգ թիկնոցը ծածանվում էր, մերկ ոտքերը հզոր լույսի տակ արտասովոր, ալ կարմիր գույն էին ստացել և սևաթույր, գետի նմանվող մազերի վրա ընդգծվում էր կիսով չափ անիմաստ, ծաղկազարդ ու փետրազարդ ծղոտե գլխարկը: Երբեմն նա ցածրաձայն կանչում էր ձիուն, և այդ ժամանակ մյուս հնդկացին՝ ետևից եկողը, հասնում էր ու ճիպոտով հարվածում:

Հրաշք լույսը խամրում էր սարերից, աշխարհն ընկղմվում խավարի մեջ, օդը՝ զովանում: Երկնքում մի կես լուսին պայքարում էր արևմուտքի փայլի դեմ: Հսկա ստվերներ էին իջնում

ժայռոտ լանջերով: Ջուր էր հոսում: Կինը միայն հոգնածություն էր զգում, անասելի հոգնածություն ու վերևից փչող սառը քամի: Նա չզգաց, թե ինչպես լուսնի լույսը հաջորդեց ցերեկվան: Այդ պատահեց, քանի դեռ նա ճանապարհորդում էր հոգնածությունից անգիտակից վիճակում:

Մի քանի ժամ նրանք առաջ շարժվեցին լուսնի լույսի ներքո: Հետո հանկարծ կանգ առան: Տղամարդիկ ցածրաձայն մի քանի բառ փոխանակեցին:

— Այստեղ ենք կանգ առնում,— ասաց երիտասարդը:

Կինը սպասում էր, որ նա կօգնի իրեն իջնել ձիուց: Երիտասարդն ուղղակի կանգնել էր ձիու երասանը բռնած: Կինը թամքից գրեթե վայր ընկավ՝ այնքան հոգնած էր:

Նրանք մի տեղ էին ընտրել ժայռի ստորոտին, որը դեռ արձակում էր արևի ջերմությունը: Տղամարդկանցից մեկը սոճու ճյուղեր կտրեց, մյուսը պատսպարվելու համար ժայռի դիմաց փոքրիկ քողտիկներ սարքեց և մահճակալների փոխարեն ասեղնատերև սոճու ճյուղեր փռեց: Երրորդը եգիպտացորենի բլիթներ տաքացնելու համար փոքրիկ խարույկ վառեց: Աշխատում էին անխոս:

Կինը ջուր խմեց: Ուտել չէր ուզում, միայն պառկել էր ուզում:

— Ես որտե՞ղ եմ քնելու,— հարցրեց կինը:

Երիտասարդը մատնացույց արեց քողտիկներից մեկը: Կինը ներս սողաց ու անշարժ պառկեց: Նրա համար միևնույն էր, թե ինչ էր տեղի ունենում իր հետ՝ այնքան հոգնած էր, այնքան վերացած աշխարհից: Եղևնու ճյուղերի արանքից տեսնում էր խարույկի շուրջը պպզած երեք տղամարդկանց, որոնք թուխ մատներով մոխիրների միջից վերցրած եգիպտացորենի բլիթնե՞ր էին ծամում և դդմե սափորից ջուր խմում: Նրանք ցածր, շշուկով ու երկար ընդմիջումներով էին խոսում: Կնոջ ձիու թամբն ու խուրջիններն ընկած էին խարույկից ոչ հեռու՝ չբացված, ձեռք չտված: Ոչ ինքն էր տղամարդկանց հետաքրքրում, ոչ իր ունեցվածքը: Գլխարկները գլխներին՝ նրանք պպզել էին այնտեղ ու մեքենայաբար, կենդանիների պես անվերջ ուտում էին, առջևից ու ետևից մուգ թիկնոցն ու ծոպքերը գետնին էին քսվում, հզոր, թուխ ոտքերը մերկ ու ծալված էին կենդանու ոտքերի պես՝ ցույց տալով կեղտոտ, ճերմակ շապիկն ու ազդրաշորը, որից բացի շապիկի տակ ոչինչ չկար: Եվ նրանք կնոջ նկատմամբ նույնքան նվազ հետաքրքրություն էին ցուցաբերում, ինչքան եթե մի կտոր որս լիներ, որ տուն էին տանում ու կախել էին քողտիկի ներսում:

Որոշ ժամանակ անց նրանք խնամքով հանգցրին խարույկը և իրենց քողտիկը մտան: Ճյուղերի արանքից լուսնի լույսի ներքո լռությամբ խաչվող ու անցնող մութ ուրվապատկերներ տեսնելով, կինը մի պահ վախեցավ ու անհանգստացավ: Արդյոք հիմա կհարձակվե՞ն:

Բայց՝ ոչ: Նրան ասես մոռացել էին: Ձիու ոտքերը կապել էին, լսվում էր՝ ինչպես էր ձին հոգնած ոստնում: Ամեն ինչ լուռ էր, սարերի պես լուռ, սառն ու մահազդու: Կինը քնեց ու արթնացավ, նորից քնեց ցրտից ու հոգնածությունից կիսագիտակից ընդարմության մեջ: Երկար, երկար գիշեր, սառն ու հավերժական, և կինը գիտակցեց, որ ինքը մեռած է:

## 2

Մինչդեռ, երբ իրարանցում սկսվեց. չրխկացին կայծքարն ու հրահանը, ուրվագծվեց կրակի կարմիր լեզուների առջև պպզած տղամարդը՝ ասես շունը ոսկորի առաջ, ու կինն զգաց, որ լույսը բացվում է, նրան թվաց, թե գիշերը շատ արագ է անցել:

Երբ խարույկը վառվում էր, կինն իր ապաստանից դուրս եկավ միայն սուրճ խմելու փափագով: Տղամարդիկ էլի էին եգիպտացորենի բլիթներ տաքացնում:

— Կարո՞ղ ենք սուրճ պատրաստել,— հարցրեց կինը:

Երիտասարդը նրան նայեց, և կինը նրա աչքերում հեգնանքի նույն կայծը նշուլեց: Տղամարդը տարուբերեց գլուխը:

— Մենք սուրճ չենք խմում, ժամանակ չկա:

Իսկ պպզած տարեց տղամարդիկ վախեցնող գունատ լուսաբացի ներքո վեր նայեցին, և նրանց աչքերում անգամ հեգնանք չկար: Միայն այն լարված, հեռավոր, դաժան փայլը, որ կնոջ համար սոսկալի էր: Նրանք անըմբռնելի էին: Կնոջ մեջ ընդհանրապես կին չէին կարողանում տեսնել: Ասես ինքը իսկապես կին չլիներ: Ասես ճերմակությունը զրկել էր իրեն կանացիությունից ու մի տեսակ հսկա, ճերմակ, էգ մրջյուն դարձրել: Սա էր այն ամենը, ինչ տեսնում էին նրա մեջ:

Այգաբացից առաջ կինը դարձյալ թամբին էր, և նրանք, սառը օդը շնչելով, զառիթափն էին բարձրանում: Ծագեց արևը, և շուտով կինը լերկ տեղանքում արեգակի տակ, սաստիկ շոգեց: Նրան թվում էր՝ իրենք աշխարհի տանիքն են բարձրանում: Դրանից այն կողմ, երկնքի հենքին ձյան շերտեր էին:

Կեսօրին մոտ նրանք հասան մի տեղ, որից այն կողմ ձին գնալ չէր կարող: Մի քիչ հանգստացան գազանի փայլուն կրծքի նմանվող հսկա, թեք ապառաժի առջև: Պետք է անցնեին ժայռի միջի ծուռումուռ ճեղքով: Կնոջը թվում էր, թե մի քանի ժամ է, ինչ ինքը տանջվում է՝ հենված ձեռքերին ու ծնկներին, անցնելով ճեղքից ճեղք, ժայռակերպ լերկ սարի թեք մակերեսին: Առջևից ու ետևից եկող հնդկացիները քայլում էին դանդաղ, ուղիղ կեցվածքով, կաշվե հյուսածո սանդալներ հագած: Բայց ձիարշավի երկարաճիտ կոշիկներով կինը ուղիղ կանգնել չէր համարձակվում:

Մինչդեռ ամբողջ ժամանակ զարմանում էր, որ ինքը համառորեն կառչում ու սողոսկում է մեկ մղոն երկարություն ունեցող այս ժայռի ընդարձակ մակերեսով: Ինչո՞ւ վայր չէր նետում իրեն ու վերջ չէր տալիս ամեն ինչին: Աշխարհը նրա ոտքերի տակ էր:

Երբ վերջապես հայտնվեցին քարքարոտ լանջին, կինը ետ նայեց ու տեսավ երրորդ հնդկացուն, որը գալիս էր ձիու թամբն ու պայուսակները պարանով ճակատից կապած ու մեջքին գցած: Նա գլխարկը ձեռքում էր բռնել, գալիս էր դանդաղ, հնդկացուն հատուկ անշտապ, նուրբ, հաստատուն քայլվածքով, ժայռի ծերպերում չտատանվելով, սարի երկաթե վահանի վրա, ասես մի գծով:

Քարքարոտ լանջը ներքև էր տանում: Հնդկացիները հետզհետե կարծես հուզվում էին: Մեկը դանդաղաքայլ առաջ վազեց ու անհետացավ ոլորանի քարերի ետևում: Իսկ ճամփան ոլորվում էր ու ներքև տանում, մինչև առավոտյան արևի պայծառ շողերի ներքո իրենց ոտքերի տակ տեսան ժայռերով պարսպված մի հովիտ՝ ասես սարերի արանքում հսկա, ընդարձակ, խոր կիրճ: Մի կանաչ հովիտ, ուր գետ կար, ծառեր ու ցածր, ընդարձակ, փայլ արձակող տների կույտեր: Ամեն ինչ շատ փոքր էր ու կատարյալ, երեք հազար ոտնաչափ ներքև. անգամ գետակի վրայի լայն կամուրջը և տներով շրջապատված հրապարակը, հրապարակի երկու հանդիպակաց ծայրերում կուտակված ավելի մեծ տները, բարձր բարդիները, արոտավայրերն ու եգիպտացորենի դեղին արտերը, հեռվում՝ լանջերին տեղ-տեղ արածող ոչխարների կամ այծերի հոտերը, գետափի ցանկապատերը: Ահա այն՝ բոլորովին փոքրիկ ու կատարյալ, հեքիաթային, ինչպես հեքիաթային կթվա ցանկացած տեսարան, եթե նայվի նարերի բարձրությունից: Արտասովորն այն էր, որ ցածրիկ տները ճերմակությունից փայլում էին, ճեփ-ճերմակ էին, նման աղի բյուրեղների կամ արծաթի: Սա կնոջը վախեցրեց:

Զառիթափի գլխից, արագավազ ու ցած թափվող առվակի ուղղությամբ նրանք սկսեցին ոլոր-մոլոր վայրէջքը: Սկզբում միայն ժայռեր կային, հետո սոճիներ հայտնվեցին, իսկ շուտով արծաթաբուն կաղամախիներ: Առատ սփռված էին մեծ մարգարտածաղիկներ հիշեցնող, ինչպես նաև ճերմակ ու դեղին աշնանային ծաղիկները: Բայց կինը ստիպված էր նստել ու հանգստանալ, այնքան որ հոգնած էր: Եվ վառ ծաղիկները նա աղոտ էր տեսնում, թռչող, գունատ՝ ստվերների պես՝ ասես հանդերձյալ աշխարհում:

Վերջապես խառն աճած դողդոջուն կաղամախիների արանքում երևացին խոտն ու արոտավայրերը: Մի խաշնարած արևի տակ գրեթե մերկ՝ միայն գլխարկով ու բամբակե ազդրաշորով, շագանակագույն ոչխարներ էր քշում: Կինն ու երիտասարդը մի բացատում նստեցին ու սկսեցին սպասել: Թամբը բերող տղամարդն էլ էր առաջ անցել:

Լսվեցին մոտեցող ոտնաձայներ: Եկվորները կարմիր, նարնջագույն, դեղին, սև ճոխ թիկնոցներով, գլուխները վառ փետուրներով զարդարած երեք տղամարդ էին: Ամենատարեցի ալեխառն մազերի հետ բուրդ էր հյուսված, իսկ կարմիր ու դեղնանարնջագույն թիկնոցը ընձառյուծի մորթու պես տարօրինակ սև բծեր ուներ: Մյուս երկուսի մազերն ալեխառն չէին, բայց նրանք նույնպես ավագներ էին: Նրանց թիկնոցները զոլավոր էին, իսկ սանրվածքը՝ ոչ այնքան շքեղ:

Երիտասարդ հնդկացին ցածրաձայն մի քանի բառ ասաց ավագներին: Նրանք լսում էին առանց պատասխանելու, առանց նրան կամ կնոջը նայելու, դեմքերը շրջած, աչքերը գետնին հառած, միայն լսում էին: Հետո վերջապես շրջվեցին ու նայեցին կնոջը:

Ծեր առաջնորդը, թե բուժակը, կնճիռներով ակոսված մուգ բրոնզագույն դեմք ուներ, բերանի շուրջը՝ մի քանի նոսր, ալեխառն մազ: Ուսերից կախ էին ընկել բրդով ու գունավոր փետուրներով հյուսված երկու ալեխառն հյուսեր: Բայց ազդեցիկը միայն նրա աչքերնն էին: Դրանք սև էին ու տարօրինակ խորաթափանց ուժ ունեին՝ միանգամայն քաջատեղյակ իրենց դիվային, համարձակ ուժին: Նա մի խորաթափանց հայացք նետեց ճերմակամորթ կնոջ աչքերի մեջ՝ հայտնի չէ, թե ինչ փնտրելով: Կինն իր ողջ ուժը ժողովեց նրա հայացքին դիմանալու և հանկարծակիի չգալու համար: Բայց՝ իզուր: Տղամարդն այնպես չէր նայում նրան, ինչպես մարդկային մի էակը՝ մյուսին: Նա անգամ կնոջ դիմադրությունը կամ մարտահրավերը չընմբռնեց, այլ դրանց կողքով չգիտես, թե ուր էր նայում:

Կինը տեսավ, որ այդ ծերունուց մարդկային վերաբերմունք սպասելն անհույս բան է:

Ծերունին շրջվեց ու մի քանի բառ ասաց երիտասարդ հնդկացուն:

— Նա հարցնում է ի՞նչ եք փնտրում այստեղ,— հարցրեց երիտասարդը իսպաներեն:

— Ես: Ոչինչ: Ուղղակի եկել եմ տեսնելու, թե ինչի է նման:

Պատասխանը նորից թարգմանվեց, և ծերունին մեկ անգամ ևս նայեց կնոջը: Հետո շշուկով նորից դիմեց երիտասարդ հնդկացուն:

— Նա հարցնում է՝ ինչո՞ւ է հեռացել իր տանից, ուր ճերմակ մարդիկ կան: Արդյոք ուզում է ճերմակ մարդկանց Աստծուն չիլչուիների մո՞տ բերել:

— Ոչ,— անխոհեմաբար պատասխանեց կինը: Ինքս եմ փախել ճերմակ մարդու Աստծուց: Եկել եմ փնտրելու չիլչուիների Աստծուն:

Երբ սա թարգմանվեց, համակ լռություն տիրեց: Հետո ծերունին նորից խոսեց ցածր, ասես հոգնաբեկ ձայնով:

— Արդյոք ճերմակ կինը չիլչուիների Աստծուն է փնտրում, որովհետև հոգնե՞լ է սեփական Աստծուց,— հնչեց հարցը:

— Այո, հոգնել է: Հոգնել է ճերմակ մարդու Աստծուց,— ասաց կինը, մտածելով, որ իրենից այդ պատասխանն էին սպասում: Ինքը կուզենար՝ ծառայել չիլչուիների աստվածներին:

Կինն զգաց, որ հնդկացիների միջով ցնծության ու էքստազի տարօրինակ դող անցավ իր պատասխանի թարգմանությանը հաջորդած լարված լռության ընթացքում: Հետո բոլորը կնոջը նայեցին սրաթափանց, մթին աչքերով, որոնց մեջ անընմբռնելիորեն փայլատակեց դաժան, անհագ նպատակը: Կինն ավելի շփոթվեց, քանի որ այդ հայացքի մեջ զգայական

կամ վավաշոտ բան չգտավ: Այն սարսափելի, փայլատակող մաքրություն ուներ, որը նրան հասկանալի չէր: Կինը վախեցավ և վախից կաթվածահար կլիներ, եթե նրա մեջ ինչ-որ բան մեռած չլիներ՝ թողնելով միայն սառը, դիտունակ հիացմունքը:

Ավագները փոքր-ինչ զրուցեցին, հետո երկուսը հեռացան՝ կնոջը երիտասարդ հնդկացու և ամենաձեր առաջնորդի հետ թողնելով: Հիմա ծերունին նրան որոշակի հոգատարությամբ նայեց:

— Նա հարցնում է՝ հոգնե՞լ եք,— թարգմանեց երիտասարդը:

— Շատ,— պատասխանեց կինը:

— Տղամարդիկ ձեզ համար պատգարակ կբերեն,— ասաց երիտասարդ հնդկացին:

Երբ բերեցին պատգարակը, պարզվեց, որ կոշտ, մազոտ, մուգ բրդից մի տեսակ գամակ է, կապված ձողից, որը երկու երկարամազ հնդկացի տանում էին իրենց ուսերին դրած: Բրդե գամակը գետնին փռեցին, կինը նստեց վրան, ու տղամարդիկ ձողն ուսերին դրեցին: Ճոճելով, ասես պարկի մեջ լիներ, կնոջը տարան բացատից, ծեր առաջնորդի ետևից, որի ընձառյուծի բծերով թիկնոցը հետաքրքիր խաղեր էր անում արևի լույսի ներքո:

Նրանք դաշտեզրին էին հայտնվել: Ուղղակի առջևում եգիպտացորենի հասած կողրերով արտերն էին փռված: Այս բարձրության վրա եգիպտացորենը շատ բարձր չէր աճում: Խիստ մաշված ճանապարհը արտի միջով էր անցնում, և կնոջը միայն թեթև, հաստատուն, սահուն քայլող, դեմքը դեպի առաջ ուղղած, աջ ու ձախ չնայող հրակարմիր ու սև թիկնոցով ծեր առաջնորդի ուղիղ կեցվածքն էր երևում: Պատգարակակիրները գնում էին ռիթմիկ քայլվածքով, առջևի տղամարդու, երկար, կապտասև մազերը ցած էին թափվում մերկ ուսերից՝ գետի պես փայլելով:

Եգիպտացորենի արտերն անցան ու մոտեցան հողից և հում աղյուսներից կառուցված մի հսկա պատի կամ հողե շինության: Փայտե դռները բաց էին: Առաջանալով՝ ընկան ծաղիկներով, խոտերով ու մրգատու ծառերով լի փոքրիկ պարտեզների ցանցը. յուրաքանչյուր պարտեզ ջուր էր ստանում հոսող ջրի մի փոքրիկ ջրանցքից: Ծառերի ու ծաղիկների յուրաքանչյուր կույտի մեջ ճերմակությունից փայլող տնակ կար՝ անպատուհան և դուռը փակ: Վայրը փոքրիկ արահետների, առվակների և հրապարակ տանող փոքրիկ կամուրջների, ծաղկուն պարտեզների ցանց էր:

Բռնելով ամենալայն արահետը՝ տերևների ու խոտերի արանքով անցնող հանդարտ, նեղլիկ ճամփան, որ դարերի ընթացքում հարթվել էր մարդկային ոտքերով ու չէր փչացվել ձիու սմբակով կամ անիվով, նրանք հասան խաղաղ, զուլալ գետակին և անցան գերանակապ կամրջով: Ամեն ինչ խաղաղ էր, ոչ մի տեղ մարդկային էակ չէր երևում: Ճանապարհը շարունակեց էր հսկա կաղամախիների տակով: Անսպասելիորեն գյուղի կենտրոնական հրապարակի եզրին հայտնվեցին:

Սա հարթ տանիքներով, ցածր, ճերմակ տներից ու երկու ավելի մեծ շինություններից կազմված մի երկար ուղղանկյուն էր, որի երկու ծայրերում կանգնած քառակուսի հյուղակները կույտ էին կազմել թեք, իրար նայող համեմատաբար մեծ, երկար հյուղակներից վեր: Տնակներից յուրաքանչյուրը կուրացնելու աստիճան ճերմակ էր՝ հարթ քիվերի տակից դուրս պրծած կլոր գերանների ծայրերն ու տափակ տանիքները չհաշված: Համեմատաբար մեծ շինություններից յուրաքանչյուրի շուրջը, հրապարակի դրսի կողմում, անասնանոցի ցանկապատ կար, ներսում՝ ծառաշատ ու ծաղկաշատ պարտեզ և բազմաթիվ տնակներ:

Շունչ արարած չէր երևում: Տների արանքով նրանք անձայն կենտրոնական հրապարակ մտան: Սա բոլորովին մերկ էր և չոր, հողը՝ հարթված մի դռնից մյուսը գնացած բազմաթիվ սերունդների ոտքերի տակ: Անպատուհան տների բոլոր դռներն այս դատարկ հրապարակին էին նայում, բայց բոլորը փակ էին: Վառելափայտը դարսած էր շեմի մոտ, կավե վառարանը դեռ ծխում էր, բայց կենդանության նշան չկար:

Ծերունին հրապարակի միջով ուղղվեց հակառակ կողմում գտնվող մեծ տունը, որի երկու վերին հարկերից յուրաքանչյուրը, մանկական խորանարդիկներով կառուցված տան հարկերի պես, քանի բարձրանում՝ փոքրանում էր: Քարե աստիճանները դրսից առաջին հարկի կտուրն էին տանում:

Այս աստիճանների առջև պատգարակակիրները կանգ առան և կնոջը դրեցին գետնին:

— Դու վերև ես գնալու,— ասաց իսպաներեն խոսող երիտասարդ հնդկացին:

Կինը քարե աստիճաններով բարձրացավ առաջին տան հողածածկ կտուրը, որը երկրորդ հարկի պատի շուրջը հարթակ էր կազմում: Այս հարթակով նա մեծ տան հակառակ կողմը պտտվեց: Այստեղ նրանք նորից պարտեզ իջան:

Առայժմ ոչ ոքի չէին հանդիպել: Բայց հիմա հայտնվեցին երկու տղամարդ՝ գլխաբաց, երկար հյուսերով, ազդրաշորերի մեջ հավաքած միատեսակ ճերմակ շապիկներով: Կարմիր ու դեղին ծաղիկներով պարտեզի միջով սրանք երեք նորեկների հետ դեպի երկար, ցածրիկ, ճերմակ մի տուն գնացին: Ներս մտան առանց թակելու:

Ներսում մութ էր: Տղամարդկանց ցածր շշուկներ էին լսվում: Շատ տղամարդիկ կային, նրանց ճերմակ շապիկները նշմարվում էին մթության մեջ, իսկ մթին դեմքերը տեսանելի չէին: Նրանք նստած էին հեռավոր պատի երկայնքով ընկած հսկա, հարթ գերանին: Գերանից բացի սենյակում կարծես ոչինչ չկար: Բայց՝ ոչ. մթության մեջ սենյակի մի ծայրում մի օթոց էր նշմարվում, մի տեսակ մահճակալ, վրան պառկած ինչ-որ մեկը՝ մորթիներով ծածկված:

Կնոջն ուղեկցող բծավոր թիկնոցով հնդկացին հանեց գլխարկը, թիկնոցն ու սանդալները: Դրանք մի կողմ դնելով՝ մոտեցավ օթոցին և ցածրաձայն ինչ-որ բան ասաց: Մի քանի րոպե պատասխան չկար: Հետո դժվար նշմարվող դեմքին կախ ընկած ձյունաճերմակ մազերով մի ծերունի տեսիլքի պես բարձրացավ տեղից, արմունկին հենվեց ու լարված լռության մեջ անորոշ հայացքը խմբին հառեց:

Ալեխառն մազերով հնդկացին նորից խոսեց. և երիտասարդը, կնոջ ձեռքից բռնելով, առաջ տարավ: Քաթանե հեծելազգեստով, սև, երկարաճիտ կոշիկներով, գլխարկով, զգայացունց կարմիր փողկապով կինը կանգնեց զառամյալ ծերունու մորթածածկ մահճի կողքին, իսկ վերջինս արմունկին հենված ուրվականի պես բարձրացավ օթոցում, ճերմակ մազերը խռիվ թափված, դեմքը՝ գրեթե սև, մինչդեռ բացակայող լարված, ոչ երկրային ուշադրությամբ, կնոջը տեսնելու համար դեպի առաջ թեքված:

Նրա դեմքն այնքան ծեր էր, ասես մութ ապակի լիներ, և շուրթերից ու ծնոտից կախ ընկած հատուկենտ ճերմակ, գանգուր մազերը շատ անբնական էին: Թուխ, ապակենման դեմքը շրջանակելով՝ չիյուսված ու խռիվ ցած էին թափվում երկար, ճերմակ գանգուրները: Իսկ ճերմակ հոնքերի շղարշի տակից ծեր առաջնորդի մթին աչքերը կնոջն էին նայում ասես հեռու-հեռավոր մեռելների միջից, տեսնելով մի բան, որը ոչ ոքի տեսանելի չէր:

Վերջապես ծերունին մի քանի հանելուկային խուլ բառ արտասանեց. ասես մթությանը դիմելով:

— Նա հարցնում է՝ քո սիրտը չիլչուիների աստծո՞ւն ես բերել,— թարգմանեց երիտասարդ հնդկացին:

— Ասացեք՝ այո,— ակամա պատասխանեց կինը:

Լռություն տիրեց: Զառամյալ հնդկացին նորից խոսեց, կարծես օդին դիմելով: Տղամարդկանցից մեկը դուրս գնաց: Ասես հավերժ լռություն տիրեց միայն բաց դռներից լուսավորվող այդ խավար սենյակում:

Կինը շուրջը նայեց: Պատի մոտի գերանին, դեմքով դեպի դուռը՝ նստած էին ալեխառն մազերով չորս տղամարդ: Երկու ուրիշները՝ հզոր ու անտարբեր, կանգնած էին դռան մոտ: Բոլորը երկար մազեր ունեին ու ազդրաշորի մեջ հավաքված ճերմակ շապիկներ էին հագել: Նրանց ուժեղ ոտքերը մերկ էին ու թուխ: Լռությունն ասես հավերժություն լիներ:

Վերջապես տղամարդը վերադարձավ՝ ձեռքին ճերմակ ու մուգ գույնի հագուստ: Երիտասարդ հնդկացին նրա ձեռքից վերցրեց հագուստն ու կնոջ առջև պահելով՝ ասաց.

— Դու պետք է փոխես հագուստդ:

— Միայն եթե բոլոր տղամարդիկ դուրս գան,— ասաց կինը:

— Քեզ ոչ ոք վնաս չի տա,— հանդարտ ասաց հնդկացին:

— Միայն տղամարդկանց դուրս գնալուց հետո,— ասաց կինը:

Հնդկացին նայեց դռան մոտ կանգնած երկու տղամարդկանց: Նրանք առաջ եկան ու կանգնած տեղը առանց ցավ պատճառելու, բայց մեծ ուժով անսպասելիորեն բռնեցին կնոջ թևերը: Հետո մոտեցան ծերունիներից երկուսը և զարմանալի հմտությամբ սուր դանակներով վերից վար կտրեցին ու հանեցին նրա երկարաճիտ կոշիկները, այնպես կտրեցին հագուստը, որ ընկավ վրայից: Մի քանի վայրկյան հետո կինը կանգնած էր այնտեղ ճերմակ ու մերկ: Մահճակալի վրայի զառամյալ ծերունին խոսեց, և կնոջը պտտեցին, որ ծերունին տեսնի: Ծերունին նորից խոսեց. և երիտասարդ հնդկացին կնոջ խարտյաշ մազերից ճարպկորեն հանեց հերակալներն ու սանրը, այնպես որ մազերն անհավասար, ցաք ու ցրիվ թափվեցին ուսերին:

Հետո ծերունին նորից խոսեց: Հնդկացին կնոջը մահճակալին մոտեցրեց: Ալեհեր, ապակենման, թուխ ծերունին թքոտեց մատների ծայրերն ու ձեռքն ամենայն նրբությամբ հպեց կնոջ կրծքին, մարմնին, հետո մեջքին: Եվ ամեն անգամ, երբ մատների ծայրերը սահում էին մաշկի վրայով, կինը տարօրինակ կերպով ցնցվում էր, ասես ինքը Մահն էր հպվում նրան:

Ու կինը գրեթե տխրությամբ զարմացավ, թե ինչու չի ամաչում իր մերկությունից: Նա միայն տխրություն ու ափսոսանք էր զգում: Որովհետև ոչ ոք չէր ամաչում: Բոլոր տարեց տղամարդիկ մռայլ էին ու լարված, համակված ինչ-որ ուրիշ խոր, մռայլ, անհասանելի զգացումով, որը նվազեցրեց կնոջ շփոթմունքը, մինչդեռ երիտասարդ հնդկացու դեմքը էքստազի տարօրինակ արտահայտություն ուներ: Իսկ կինը, կինը միայն ծայրաստիճան տարօրինակ ու ինքն իրենից դուրս էր, ասես մարմինն իրենը չլիներ:

Նրան նոր հագուստ հագցրին՝ մինչև ծնկները հասնող երկար, ճերմակ բամբակե շապիկ, կարմիր ու կանաչ ասեղնագործած ծաղիկներով, հաստ, կապույտ բրդից վերնաշապիկ: Այն միայն մի ուսին էր ամրանում, իսկ գոտկատեղին կարմիր ու սև բրդից հյուսված գոտի էր կապվում:

Այս հանդերձանքով նրան ոտաբոբիկ տարան ցանկապատով պարտեզի միջի մի տնակ: Երիտասարդ հնդկացին ասաց, որ կինը կարող է պահանջել, ինչ կամենա: Կինը լվացվելու համար ջուր խնդրեց: Հնդկացին մի կուժ ջուր ու մի երկար փայտե տաշտ բերեց: Հետո ամրացրեց տան ճաղապատ դուռը և կնոջն այնտեղ բանտարկեց: Իր տան ճաղապատ դռան միջով կնոջը երևում էին պարտեզի կարմիր ծաղիկներն ու մի կոլիբրի: Հետո մեծ տան կտուրից թմբուկի երկար, թնդաձայն, իր կոչով ոչ երկրային հարվածները հասան ականջին և տարօրինակ լեզվով, հուզականությունից անչափ զուրկ առոգանությամբ կտուրից կանչող՝ Ճառ ասող, թե քարոզ կարդացող մի սուր ձայն: Եվ նա լսում էր, ասես հանդերձյալ աշխարհից:

Բայց կինը սաստիկ հոգնած էր: Նա պառկեց մորթածածկ թախտին, վրան գցեց մուգ, բրդյա ծածկոցն ու քնեց՝ ոչ մի բանի մասին չմտածելով:

Արթնացավ ետմիջօրեին: Հյուսկեն սկուտեղով ուտելիքը ձեռքին՝ եգիպտացորենի բլիթներ, ցորենի շիլա՝ մսի կտորներով՝ հավանաբար ոչխարի, մեղրով ըմպելիք, մի քանի թարմ սալոր, ներս էր մտնում երիտասարդ հնդկացին: Կնոջ համար նաև կարմիր ու դեղին ծաղիկներից հյուսված մի երկար ծաղկաշղթա էր բերել, ծայրերին՝ կապույտ կոկոններով հանգույցներ: Երիտասարդ հնդկացին ծաղկաշղթան ցողեց կժի ջրով, հետո, Ժպիտը դեմքին՝ կնոջը մեկնեց: Նա շատ բարեկիրթ ու հոգատար էր երևում, իսկ դեմքին ու մթին աչքերում հրճվանքի ու էքստազի տարօրինակ արտահայտություն կար, որը փոքր-ինչ վախեցրեց կնոջը: Ծանր, թուխ կոպերով մթին աչքերի փայլն անհետացել էր, և նա կնոջն էր նայում էքստազի այդ տարօրինակ, մեղմ, թունդ բռնկմամբ, որը մինչև վերջ մարդկային չէր, սաստիկ անկիրք էր ու կնոջը շփոթության մեջ էր գցում:

— Ուրիշ բան ուզո՞ւմ ես, հարցրեց երիտասարդը թավ, հանդարտ, մեղեդային ձայնով, որը միշտ զսպված էր թվում, ասես մեկուսի, ուրիշի հետ էր խոսում, կամ, ասես, չէր ուզում, որ կինն իր ասածը լսի:

— Ինձ այստեղ բանտարկվա՞ծ եք պահելու,— հարցրեց կինը:

— Ոչ: Վաղը կարող եք զբոսնել պարտեզում,— քնքշորեն պատասխանեց տղամարդը:

Միշտ այս տարօրինակ հոգատարությունը:

— Այս ըմպելիքից չե՞ք ուզում,— կնոջը մի փոքրիկ կավե գավաթ առաջարկեց նա:— Շատ թարմացնող է:

Կինը փոքրիկ ումպերով խմեց հեղուկը: Այն պատրաստված էր բույսերից, քաղցրացված մեղրով և տարօրինակ, երկար պահպանվող համ ուներ: Երիտասարդը բավականությամբ նրան էր նայում:

— Արտասովոր համ ունի,— ասաց կինը:

— Շատ թարմացնող է,— պատասխանեց երիտասարդը՝ նրան հառած մթին աչքերը, որոնց մեջ էքստազի գոհունակ արտահայտություն վար: Հետո նա դուրս գնաց: Իսկ կինը շուտով սրտխառնոց զգաց և իրեն տիրապետել չկարողանալով՝ սկսեց փսխել:

Դրանից հետո նրա վրա չափազանց հանգստացնող թմրություն իջավ, ծայրանդամները ուժ ստացան, ապա թուլացան ու թմրեցին, և նա պառկեց թախտին՝ ականջ դնելով գյուղից եկող ձայներին, դիտելով դեղնող երկինքը, առնելով այրվող մայրու թե եղևնու փայտի հոտը: Այնքան պարզ էր լսում շների հաչոցը, հեռվից եկող ոտնաձայները, շշուկները, այնքան պարզորոշ էր տեսնում անսահման հեռվում, մայրամուտին ծագող միակ պայծառ աստղը, որ նրան թվաց, թե զգայությունները տարածվել են օդում, թե ինքը կարող է տարբերել երեկոյան բացվող ծաղիկների ձայնը տիեզերքի իսկական, զուլալ ձայնից, երբ երկրագնդի մթնոլորտի լայն գոտիները սահում են մեկը մյուսի կողքով և օդում իջնող ու բարձրացող խոնավությունը քնարի պես արձագանքում է տիեզերքին:

Նա բանտարկյալ էր իր տանն ու պարսպապատ պարտեզում, բայց չէր բողոքում: Եվ օրեր անցան մինչև գիտակցեց, որ ուրիշ կնոջ չի տեսել: Միայն տղամարդկանց, տարեց տղամարդկանց այն մեծ տանը, որը նրան վանք էր թվացել, իսկ տղամարդիկ ասես քարոզիչներ լինեին: Նրանք միշտ նույն գույներն էին հագնում՝ կարմիր, նարնջագույն, դեղին ու սև և նույն մեծալուրջ, մտահոգ շարժուձևն ունեին:

Երբեմն մի ծերունի կգար ու կնստեր նրա սենյակում, բացարձակապես լուռ: Ոչ ոք հնդկացիների լեզվից զատ ուրիշ լեզվով չէր խոսում, երիտասարդից բացի: Տարեց տղամարդիկ ժպտում էին նրան, մեկ ժամի չափ նստում նրա մոտ, երբեմն ժպտում, երբ նա իսպաներեն էր խոսում, բայց այդ զուսպ, բարյացակամ թվացող ժպիտից բացի ուրիշ պատասխան չէին տալիս: Եվ նրանց վերաբերմունքի մեջ գրեթե հայրական հոգատարություն կար: Մինչդեռ մտահոգությամբ կնոջը նայող նրանց մթին աչքերի խորքում

ինչ-որ զարհուրելիորեն վայրենի ու դաժան բան կար: Նրանք անմիջապես ժպիտով էին սքողում այն, երբ զգում էին, որ կինը նայում էր: Բայց կինը դա տեսել էր:

Նրան միշտ վերաբերվում էին այն տարօրինակ, անկնիք հոգատարությամբ. ծայրահեղ անկիրք բարեկրթությամբ, ինչպես ծերունին կվերաբերվեր երեխային: Բայց նա դրա տակ ուրիշ բան էր զգում, ինչ-որ սոսկալի բան: Երբ անխոս, խորամանկ, հայրական վերաբերմունքով ծեր այցելուն գնում էր, նա վախից նոպայի մեջ էր ընկնում, չնայած վախի պատճառը հայտնի չէր:

Երիտասարդ հնդկացին կնստեր անկաշկանդ ու կզրուցեր նրա հետ, ասես ծայրահեղ անկեղծությամբ: Բայց կինը զգում էր, որ նա էլ ճշմարտությունը չէր ասում: Գուցե դա ասելու բան չէր: Երիտասարդը մթին աչքերը համարյա սիրով, էքստազի տարօրինակ արտահայտությամբ կհառեր կնոջը, ու նրա հաճելի, հանդարտ, քնքշավուն ձայնով կծորար պարզունակ, սխալներով լի իսպաներենը: Նա կնոջը պատմեց, որ ինքն այն զառամյալ ծերունու թոռն էր ու բծավոր թիկնոցով տղամարդու որդին, և որ իրենք կասիկներ են՝ թագավորներ անհիշելի ժամանակներից, նույնիսկ նախքան իսպանացիների գալը: Բայց ինքը եղել էր թե Մեքսիկո Սիթիում, թե Միացյալ Նահանգներում, Լոս Անջելեսում ճանապարհներ կառուցող բանվոր էր աշխատել, մինչև Չիկագո ճանապարհորդել:

— Ուրեմն ինչպե՞ս է, որ անգլերեն չեք խոսում,— հարցրեց կինը:

Տղամարդը երկդիմի, հակառակող, տարօրինակ հայացքը հառեց կնոջն ու լուռ տարուբերեց գլուխը:

— Միացյալ Նահանգներում ի՞նչ էիք անում ձեր երկար մազերը,— հարցրեց կինը, կտրե՞լ էիք:

Նորից տառապանք արտահայտող հայացքով տղամարդը տարուբերեց գլուխը:

— Ոչ,— ասաց նա ցածր, զսպված ձայնով,— գլխարկ էի դնում ու գլուխս գլխաշորով կապում:

— Եվ նա նորից լռեց, ասես հիշողությունները ճնշող էին:

— Ձեր մարդկանցից միայն դո՞ւք եք եղել Միացյալ Նահանգներում,— հարցրեց կինը:

— Այո, միայն ես եմ երկար բացակայել այստեղից: Մյուսները շուտ են վերադառնում՝ մեկ շաբաթից: Նրանք ուրիշ տեղ չեն մնում: Ծերունիները թույլ չեն տալիս:

— Իսկ դուք ինչո՞ւ էիք գնացել:

— Ծերունիները կամեցան, որ գնամ, որովհետև ես եմ լինելու առաջնորդը:

***

Երիտասարդ հնդկացին միշտ նույն միամտությամբ ու գրեթե մանկական անկեղծությամբ էր խոսում: Բայց կինը զգում էր, որ դրա պատճառը թերևս նրա իսպաներենն է: Կամ գուցե խոսելը նրա համար ընդհանրապես անիրական բան է: Ինչևիցե, կինը զգում էր, որ բոլոր իրական բաները չեն ասվում:

Երիտասարդ հնդկացին գալիս էր ու երկար նստում կնոջ մոտ, երբեմն ավելի երկար, քան վերջինս կցանկանար, ասես ուզում էր կնոջ կողքին լինել: Կինը հարցրեց՝ արդյոք ամուսնացա՞ծ է: Պատասխանեց, որ այո և երկու զավակ ունի:

— Կուզենայի տեսնել ձեր զավակներին,— ասաց կինը:

Բայց երիտասարդ հնդկացին ի պատասխան միայն ժպտաց, քաղցր, գրեթե էքստազային ժպիտով, որի ժամանակ մթին աչքերը գրեթե չզրկվեցին իրենց հանելուկային վերացականությունից:

Տարօրինակ էր, տղամարդը մեկ ժամի չափ նստում էր կնոջ կողքին՝ առանց շփոթմունքի մեջ գցելու կամ սեռի գիտակցություն արթնացնելու: Ասես ինքը՝ տղամարդը, որևէ սեռի չէր պատկանում, երբ նստում էր այդպես անխոս ու սիրալիր, արտաքուստ խոնարհ, գլուխը թեթևակի առաջ թեքած և գետի նմանվող փայլուն, սևաթույր մազերն օրիորդի պես ուսերին թափած:

Մինչդեռ երբ կինը նորից էր նայում, տեսնում էր նրա լայն, հզոր ուսերը, սև, հավասար հոնքերը, աչքերի վրա խոնարհած կարճ, կորացած, համառ արտևանունքները, սևին տվող հաստ շրթունքների վերևում բեղի բարակ, մորթանման գիծը, ուժեղ ծնոտը, զգում էր, որ մեկ այլ խորհրդավոր գործում նա կատաղի ու հզոր արու է: Իսկ տղամարդը, զգալով, որ կինը դիտում է իրեն, արագ բարձրացնում էր աչքերն ու մռայլ, գողունի հայացք նետում, որն անմիջապես սքողում էր այդ կիսատխուր ժպիտով:

Օրերն ու շաբաթները մի տեսակ անորոշ բավարարվածության մեջ էին անցնում: Երբեմն կինն անհանգստանում էր, զգալով, որ կորցրել է ինքնատիրապետումը: Ինքն իրեն տիրապետել չէր կարողանում, ինչ-որ ուրիշ ազդեցության տակ էր: Եվ ժամանակ առ ժամանակ ահ ու սարսափ էր ապրում: Բայց ահա գալիս էին այդ հնդկացիներն ու նստում նրա մոտ, խորամանկորեն հմայում իրենց անխոս ներկայությամբ, իրենց անխոս, անկիրք, հզոր ֆիզիկական ներկայությամբ: Նրանց նստելուն պես կինն ասես կորցնում էր իր կամքը, դառնում կամազուրկ, սեփական անտարբերության զոհը: Իսկ երիտասարդը նրա համար քաղցրացված ըմպելիք էր բերում, հաճախ նույն փսխեցուցիչը, բայց երբեմն՝ ուրիշ տեսակ: Ու խմելուց հետո կնոջ ծանր ծայրանդամներին ընդարմություն էր իջնում, զգայություններն ասես սավառնում էին օդում՝ ականջ դնելով, լսելով: Նրա համար մի էգ շնիկ բերեցին, որին նա Ֆլորա անվանեց: Եվ մի անգամ, զգայական պայծառատեսության մեջ զգաց, որ լսում է, թե ինչպես են շնիկի արգանդում սաղմնավորվում ձագերը: Մեկ ուրիշ օր կարողացավ լսել երկրագնդի պտույտի ձայնը՝ ասես հսկա աղեղնալարի շառաչյունը:

Բայց քանի օրերը կարճանում ու ցրտում էին և կինը մրսում էր, հանկարծ վերագտնում էր իր կամքը, դուրս գալու, հեռանալու ցանկությունը: Եվ երիտասարդից համառորեն պահանջում էր, որ իրեն դուրս թողնեն:

Եվ այսպես մի օր նրան թույլ տվեցին իր ապրած մեծ տան ամենաբարձր կտուրը մագլցել ու ներքև՝ հրապարակին նայել: Դա մեծ պարի օրն էր, բայց բոլորը չէ, որ պարում էին: Երեխաներին գրկած կանայք նայում էին դռների մեջ կանգնած: Դիմացը, հրապարակի հակառակ ծայրում, մյուս մեծ տան առաջ ամբոխ էր հավաքվել, իսկ առաջին հարկի հարթ տանիքին, հաջորդ հարկի լայն բացված դռների առաջ՝ մի ոչ մեծ, խայտաբղետ խումբ: Այս լայն բացված դռների միջով կնոջը երևում էր մթության մեջ առկայծող կրակը և սև, դեղին, վառ կարմիր փետրազարդ գլխարկներով, երկար, կանաչ, ծոպավոր, սև, կարմիր, դեղին փարաջայանման թիկնոցներով ետ ու առաջ անող քրմերը: Հնդկացիներին հատուկ խոր լռության մեջ դանդաղ ու համաչափ թմբկահարում էր մի մեծ թմբուկ: Ներքևի ամբոխը սպասում էր:

Հետո սկսեց արագ թմբկահարել մեկ ուրիշ թմբուկ, և լսվեց թնդաձայն, հեթանոսական երգ երգող տղամարդկանց թավ, հզոր պոռթկումը, ասես դարավոր անտառում ոռնացող քամի, մեկ շնչով քամու պես երգող բազմաթիվ հասուն տղամարդկանց ձայնը, ու մեծ տան տակից սկսեցին սկիզբ առնել պարողների երկար շարքերը: Մերկ ոսկեգույն-բրոնզագույն մարմիններով, ծփացող, սև մազերով տղամարդիկ, թևերին դեղին, կարմիր փետուրների տրցակներ, կարմիր, սև, կանաչ ասեղնագործություններով ճերմակ կոշտ բրդյա կտորից փեշեր հագած, փոքր-ինչ առաջ թեքված, կլանված ու միապաղաղ պարաքայլերով գետինն էին դոփում, նրանց գոտիներից՝ ետևում, աղվեսի մորթի էր քիթն ի վեր կախված, որը ճոճվում էր այդ մորթուն հատուկ շքեղությամբ, ու պարողների կրունկներից վեր գալարվում էին պոչերի ծայրերը: Յուրաքանչյուր տղամարդու ետևից գալիս էր փետուրներով ու ծովախեցիներով զարդարված, տարօրինակ, ճոխ սանրվածքով, սև, կարճ շապիկ հագած,

ուղիղ կեցվածքով, ձեռքերում՝ փետուրների տրցակներ բռնած, դաստակները ռիթմիկ շարժող և բոբիկ ոտքերով թեթևակի դոփող մի կին:

Այսպես, դիմացի մեծ տնից սկիզբ էր առնում պարի երկար շարքը: Իսկ այն մեծ տնից, որի կտուրին կանգնած էր կինը, այրվող խեժի տարօրինակ հոտ էր տարածվում արտասովոր լարված լռության մեջ, հետո վայրենի, արական երգեցողության պատասխան պոռթկում լսվեց, և ծավալվեց պարի երկար շարքը:

Սա շարունակվեց ամբողջ օրը. թմբուկի համառություն, արուների խուլ, ոռնացող փոթորկանման երգեցողություն, տղամարդկանց հզոր, ոսկեգույն-բրոնզագույն, դոփող ոտքերի ետևում աղվեսի մորթիների անվերջ ճոճք, ջինջ, լազուր երկնքից տղամարդկանց ու կանանց գետի նմանվող սևաթույր մազերի վրա թափվող աշնանային արևի լույս, ծայրաստիճան խաղաղ հովիտ, հեռվում գտնվող ժայռե պատեր, ջինջ երկնքի հենքին՝ անասելի հսկա թվացող սար, վրան բացարձակ ճերմակությամբ փայլող ձյուն:

Կինը մի քանի ժամ անընդհատ հմայված դիտում էր, ասես թմրադեղի ազդեցության տակ: Եվ այդ սոսկալի, համառ թմբկահարման և նախնադարյան, խանդավառ, խուլ երգեցողության, աղվեսի պոչով տղամարդկանց պարի անվերջ դոփյունի, սևաշապիկ, թռչունի պես սլացիկ կանանց քայլքի մեջ նա ասես վերջապես դեմ առ դեմ հանդիպեց սեփական մահվանը, սեփական ոչնչացմանը: Ասես նորից պետք է ջնջվեր կենաց դաշտից: Չփոխարինվող, կլանված կանանց գլուխներին արտասովոր աշտարակվող խորհրդանշանների մեջ կինն ասես նորից կարդաց Mene Mene Tekel Upharsin[1]: Իր տեսակի կանանց սեռը՝ ծայրահեղ անձնական ու մասնավոր, նորից պետք է ջնջվեր, և կնոջ խորտակված անձնական անկախության վրա մեկ անգամ պետք է բարձրանային նախնադարյան մեծ խորհրդանշանները: Նորից պետք է ոչնչանային բարեկիրթ, ճերմակամորթ կնոջ զգոնությունն ու դողդողացող, գերզգայուն բանականությունը, կանանց սեռը նորից պետք է նետվեր անանձնական սեքսի ու անանձնական կրքի կատաղի հոսանքը: Տարօրինակ բան, պայծառատեսի պես նա տեսավ պատրաստվող մեծ զոհաբերությունը, և հոգեվարքի մեջ իր տնակը վերադարձավ:

Սրանից հետո կինը միշտ հոգեվարքի մեջ էր ընկնում, երբ երեկոները լսում էր թմբուկի ձայնը, թմբուկի շուրջը հավաքված տղամարդկանց տարօրինակ, ոգևորված երգեցողությունը, լուսնի ու անհետացած արևի անտեսանելի աստվածներին կանչող վայրի կենդանիների ոռնոցի նմանվող երգեցողությունը՝ ինչ-որ բան բորենու ծիծաղից ու լացի ճիչից, աղվեսի հրճվալից հաչոցից, ոռնացող գայլի հեռավոր, վայրենի, մելամաղձոտ հրճվանքից, կատվառյուծի տանջահար ճիչից, հնադարյան կատաղի արուի քնքշազուրկ համառությունից ու մշտական դաժանությունից:

Երբեմն մթնշաղից հետո նա ամենաբարձր կտուրն էր մագլցում ու ականջ դնում հենց հրապարակի կողքի կամրջին, թմբուկի շուրջը հավաքված երիտասարդների աղոտ երևացող խմբի մոտ մեկժամյա երգեցողությանը: Երբեմն խարույկ էր վառվում, և ճերմակ շապիկներով կամ միայն ազդրաշորերով տղամարդիկ ուրվականների պես ժամ ժամի ետևից խարույկի լույսի ներքո պարում էին ու դոփում ցուրտ մթության մեջ, հնդկահավերի պես անվերջ պարում էին ու դոփում կամ թիկնոցների մեջ փաթաթվելով պպզում կրակի մոտ՝ հանգստանալու:

— Ինչո՞ւ եք բոլորդ նույն գույները հագնում,— հարցրեց կինը երիտասարդ հնդկացուն:— Ինչո՞ւ եք բոլորդ ճերմակ շապիկների վրա կարմիր, դեղին ու սև հագնում: Իսկ կանայք՝ սև շապիկներ:

Տղամարդը հետաքրքրասիրությամբ կնոջ աչքերի մեջ նայեց, և թեթև խուսափողական ժպիտը խաղաց նրա դեմքին: Ժպիտը հազիվ նշմարելի, տարօրինակ չարագուշակություն էր սքողում:

---

[1] Թիվ, թիվ, հաշիվ, կշիռ (հին եբրայերեն):

— Որովհետև մեր տղամարդիկ կրակն ու ցերեկն են, իսկ կանայք՝ գիշերներն աստղերի միջև ընկած տարածությունները,— պատասխանեց նա:

— Կանաք նույնիսկ աստղե՞ր չեն,— հարցրեց կինը:

— Ոչ: Մենք ասում ենք, որ նրանք աստղերի միջև ընկած տարածություններն են, որոնք անջատ են պահում աստղերը:

Նա կնոջ վրա տարօրինակ հայացք նետեց, և նրա աչքերում նորից հեգնանք երևաց:

— Ճերմակ մարդիկ,— ասաց նա,— ոչինչ չգիտեն: Նրանք երեխաների են նման, միշտ խաղալիքներով են խաղում: Մենք ճանաչում ենք արևը, մենք ճանաչում ենք լուսինը: Եվ ասում ենք՝ երբ ճերմակ կինն իրեն զոհաբերի մեր աստվածներին, մեր աստվածները նորից կսկսեն արարել աշխարհը, և ճերմակ մարդու աստվածները փշուր-փշուր կլինեն:

— Ինչպե՞ս թե իրեն զոհաբերի,— արագ վրա բերեց կինը:

Եվ տղամարդն ինչքան կարող էր արագ քողարկվեց մեղմ ժպիտով.

— Զոհաբերի իր աստվածներին և գա մեր աստվածների մոտ, այդ եմ ուզում ասել,— հանգստացրեց նա:

Բայց կինը չհավատաց: Նրա սիրտը համակեց վախի ու համոզվածության սառը, սուր ցավը:

— Արևն ապրում է երկնքի մի ծայրում,— շարունակեց երիտասարդը,— լուսինն ապրում է մյուս ծայրում: Եվ տղամարդն ամբողջ ժամանակ երկնքի իր մասում պետք է գոհացնի արևին, իսկ կինը երկնքի իր մասում հանգստացնի լուսնին: Ամբողջ ժամանակ նա պետք է դրանով զբաղվի: Եվ արևը երբեք չի կարողանում գնալ լուսնի կացարանը, իսկ լուսինը երբեք չի կարողանում գնալ արևի կացարանը: Այնպես որ կինը լուսնին խնդրում է մտնել իր քարայրը՝ իր մեջ: Իսկ տղամարդը ներքև է քաշում արևը՝ մինչև ձեռք է բերում արևի ուժը: Ամբողջ ժամանակ նա սրանով է զբաղված: Եվ երբ տղամարդը տիրանում է կնոջը, արևը մտնում է լուսնի քարայրը. ահա թե ինչպես է աշխարհում սկիզբ առնում ամեն բան:

Կինը լսում էր՝ մոտիկից դիտելով նրան, ինչպես մի թշնամին մյուսին, որի խոսքերը երկակի իմաստ ունեն:

— Այդ դեպքում,— հարցրեց կինը,— ինչպե՞ս է, որ դուք՝ հնդկացիներդ ճերմակ մարդկանց տերերը չեք:

— Որովհետև,— պատասխանեց երիտասարդը,— հնդկացին թուլացավ, կորցրեց արևի վրա ունեցած իշխանությունը, և ճերմակ մարդիկ գողացան արևը: Բայց նրանք այն պահել չեն կարող, պահելու ձևը չգիտեն: Նրանք տիրացան արևին, բայց նրա հետ վարվելու ձևը չգիտեին, ինչպես մեծ, մոխրագույն արջ բռնած տղան, որը ոչ կարողանում է սպանել արջին, ոչ էլ փախչել նրանից: Մոխրագույն արջը հոշոտում է իրեն բռնող տղային, երբ վերջինն ուզում է փախչել: Ճերմակ տղամարդիկ չգիտեն, թե ինչ են անում արևը, իսկ ճերմակ կանայք չգիտեն, թե ինչ են անում լուսինը: Լուսինը գազազած է ճերմակ կանանց վրա կատվառյուծի պես, որի ձագերին սպանել են: Լուսինը կծում է ճերմակ կանանց այստեղ՝ ներսից,— և նա սեղմեց կողքը:— Լուսինը բարկացած է ճերմակ կնոջ քարանձավում: Հնդկացին տեսնում է այդ: Եվ շուտով,— ավելացրեց նա, հնդկացի կանայք ետ կբերեն լուսինը ու հանգիստ կպահեն իրենց տանը: Իսկ հնդկացի տղամարդիկ ետ կբերեն արևը և կիշխեն ողջ աշխարհին: Ճերմակ տղամարդիկ չգիտեն, թե ինչ է արևը: Երբեք չեն իմացել:

Նա տարօրինակ, էքստազային հանդիսավորությամբ լռեց:

— Բայց,— կմկմաց կինը,— ինչո՞ւ եք մեզ այդպես ատում: Ինչո՞ւ եք ինձ ատում:

Տղամարդն անսպասելիորեն պայծառացած վեր նայեց, դեմքին՝ ցնցող ժպիտ:

— Ոչ, մենք չենք ատում,— տարօրինակ, բոցավառվող հայացքը կնոջ դեմքին հառելով՝ քնքշորեն ասաց նա:

— Ատում եք,— խեղճ ու անհույս ասաց կինը:

Մի պահ լուռ նստելուց հետո տղամարդը տեղից վեր կացավ ու դուրս գնաց:

3

Ձմեռ էր բարձր հովտում, ձյունը հալվում էր ցերեկվա արևից, իսկ գիշերները սաստիկ ցուրտ էին: Կինը շարունակում էր ապրել մի տեսակ նիրհի մեջ, զգալով, որ ուժերը հետզհետե դավաճանում են, ասես կամքն էր հեռանում իրենից: Նա շարունակում էր իրեն այդ նույն թուլացած, շփոթված, զոհաբերված վիճակում զգալ, քանի դեռ քաղցրացված բուսական ըմպելիքն ամբողջությամբ չէր թմրեցնում ուղեղը, զգացմունքներին չէր տալիս մի տեսակ չափազանցված, խորհրդավոր սրություն և այնպիսի զգացում, ասես ինքը նրբորեն թափանցում է իրերի ներդաշնակության մեջ: Սա, վերջապես, դարձավ նրան իսկապես հատուկ միակ գիտակցական վիճակը՝ ավելի բարձր գեղեցկության և իրերի ներդաշնակության մեջ թափանցելու այս տարօրինակ զգացումը: Հետո նա, փաստորեն, կարողանում էր լսել, թե ինչպես էին իր դռնից երևացող երկնքի հսկայական աստղերը շարժմամբ ու պայծառությամբ խոսում, ուղղակի բաներ ասում տիեզերքին, երբ երկնքի հատակին քայլող զանգակների պես անցնում էին կատարյալ նազանքով, մեկմեկու կողքով ու խմբվում հավերժական պարի մեջ, իսկ նրանց արանքում՝ մթին տարածությունները: Հետո կինը կարողանում էր լսել, թե ինչպես էին ձյան փաթիլները ցուրտ, ամպամած օրը ճռվողյունով ու սուլոցով իջնում երկնքից աշնան չվող թռչունների պես՝ անսպասելիորեն մնաս բարով անում անտեսանելի լուսնին, դուրս սահում օդային տարածություններից խաղաղ ջերմություն արձակելով: Ինքը ցած կկանչեր բանտարկված ձյանը: Կոչ կաներ անտեսանելի լուսնին, որ վերջինը դադարեր զայրանալ ու նորից հաշտվեր անտեսանելի արևի հետ, կնոջ պես, որը դադարում է բարկանալ իր տանը: Ինքը կզգար ձմեռային երկնքում արևին տեղի տվող լուսնի քաղցրությունը, երբ թուլացող սառնաշունչ հանգստությամբ ձյուն գար, երբ արևի հանգստությունը մի տեսակ ներդաշնակությամբ միախառնվեր լուսնի հանգստությանը:

Կինն էլ էր զգում հովտի հնդկացիների վրա իջած մի տեսակ մռայլությունը, խորհրդավոր, ստոիկյան մռայլություն՝ խորքում գրեթե հավատքային:

— Մենք կորցրել ենք մեր իշխանությունը արևի վրա և փորձում ենք ետ բերել: Բայց նա կատաղել է մեզ վրա ու փախել խրտնած ձիու պես: Մենք ստիպված ենք շատ բաների միջով անցնել,— այսպես ասաց երիտասարդ հնդկացին խորհրդավոր միտքն արտահայտելիս կնոջ աչքերի մեջ նայելով: Ու կինը հմայվածի պես պատասխանեց.

— Հուսով եմ՝ արևը ետ կբերեք:

Հաղթական ժպիտը ողողեց տղամարդու դեմքը:

— Դու հույս ունե՞ս,— հարցրեց նա:

— Այո,— ճակատագրական պատասխանը տվեց կինը:

— Ուրեմն ամեն ինչ կարգին է,— ասաց տղամարդը:— Մենք այն ետ կբերենք:

Եվ դուրս գնաց ցնծության մեջ:

Կինն զգաց, որ ինչ-որ վերջի է մոտենում, որից խուսափելու ուժ չուներ, մինչդեռ որը ծանր ու վերջապես սոսկալի էր թվում:

Մոտավորապես դեկտեմբեր ամիսը պետք է լիներ, որովհետև ցերեկները կարճ էին, երբ կնոջը նորից ծերունու մոտ տարան, հանեցին հագուստն, ու ծերունին մատների ծայրերով շոշափեց մարմինը:

Ձառամյալ կասիկը կնոջ աչքերի մեջ նայեց միայնակ, բացակայող, սևորակ, սրաթափանց հայացքով ու ինչ-որ բան մրմնջաց:

— Նա ուզում է, որ խաղաղության նշան անես,— թարգմանեց երիտասարդը ցույց տալով ձևը:— Խաղաղություն ու հրաժեշտ իրեն:

Կինը գերվել էր ծեր կասիկի անորակ, ապակենման, բացակայող աչքերով, որոնք արքայօձի պես հմայելով՝ անթարթ դիտում էին իրեն: Նրանց խորքում նույնպես կինը տեսավ որոշակի հայրական կարեկցանք ու աղերսանք: Պահանջված ձևով ձեռքը դեմքի առաջ բերելով՝ նա խաղաղության ու հրաժեշտի նշանն արեց: Ծերունին խաղաղության նշանով պատասխանեց. հետո սուզվեց մորթիների մեջ: Կինը կարծեց, թե ծերունին շուտով մեռնելու էր ու այդ մասին գիտեր:

Սրան հաջորդեց ծիսակատարության օրը, երբ կնոջը՝ կապտերիզ թիկնոցն ուսերին, կապույտ փետուրները ձեռքերին դուրս բերեցին ցեղի առաջ: Մի տան կրակարանի առջև նրան ծխահարեցին ու վրան մոխիր ցանեցին: Դիմացի տան կրակարանի առջև դեղին, կարմիր, սև հագած, դեմքերն ա՛լ կարմիր ներկած շքեղ, սարսափազդու քուրմերը նրան նորից ծխահարեցին: Հետո վրան ջուր շաղ տվեցին: Այդ դեպքում նա աղոտ կերպով զգում էր կրակարանի կրակը, թմբուկի ծանր-ծանր հարվածները, հզոր, բամբ, վայրենի երգեցողություն սկսող տղամարդկանց խուլ ձայները, ներքևի հրապարակում բազմության ճոճվելը և սրբազան պարի պատրաստությունը:

Հաջորդ անգամ նրա ծեծկված գիտակցությունը բթացել էր, անմիջական շրջապատը նրան ստվեր էր թվում, նյութականությունից գրեթե զուրկ: Նրբացած ու սրված զգայարաններով նա կարողանում էր լսել, թե ինչպես էր արձակված նետի պես առաջ սուրում երկրագունդը՝ օդի ճեղքման աղմուկն ու հսկա աղեղնալարի շառաչյունը: Եվ նրան թվում էր, թե օդում երկու տեսակ ուժեղ հոսանք կա, մեկը ոսկեգույն՝ դեպի արևը գնացող, մյուսը՝ անտեսանելի, արծաթագույն: Առաջինը բարձրացող անձրևի պես դեպի արևի ոսկե ներկայությունը գնացող, երկրորդը՝ արծաթագույն անձրևի պես տիեզերքի աստիճաններով դեպի սարի ձյունածածկ գագաթի ամպերն իջնող: Հետո դրանց արանքում մեկ ուրիշ տեսիլք սպասում էր, որ իրեն թափ տալով ազատվի խոնավությունից, շուրջը խորհրդավոր կերպով հավաքված ծանր, ճերմակ ձյունից: Իսկ ամռանը արևակեզ արծվի պես սպասելու էր, որ իրենից թափ տա արևի ճառագայթների ծանրությունը: Եվ նա կրակի գույն ուներ: Ու արծվի պես միշտ իրեն թափ տալով ազատում էր ձյունից կամ խիստ տապից:

Հետո թերևս մի ավելի տարօրինակ տեսիլք կար՝ կապույտ հեռաստանում կանգնած ու հետևող, միշտ հետևող: Երբեմն քամու թևերով հայտնվող կամ ջերմային ալիքներում առկայծող: Ինքը՝ կապույտ քամին, փոսերից երկինք ու երկնքից երկիր սուրացող: Կապույտ քամին, այդ միջնորդը, երկու աշխարհներին պատկանող անտեսանելի ուրվականը, որը նվագում էր անձրևների վերընթաց ու վայրընթաց լարերին:

Սովորական, անձնական գիտակցությունն ավելի ու ավելի էր հեռանում կնոջից, թմրադեղ ընդունածի պես նա ընկել էր տիեզերական կրքոտ գիտակցության վիճակի մեջ: Բնույթով ծայրահեղ պաշտամունքային հնդկացիները նրան զոհ էին դարձրել իրենց պատրանքին:

Կինը միայն մեկ անձնական հարց տվեց երիտասարդ հնդկացուն.

— Ինչո՞ւ եմ ես կապույտ հագել:

— Դա քամու գույնն է: Դա նրա գույնն է, ինչը հեռանում է ու երբեք չի վերադառնում, բայց որը միշտ այստեղ է՝ մեր մեջ, սպասում է մահվան պես: Դա մեռածների գույնն է: Դա հեռվում կանգնած գույնն է, մեզ է նայում հեռվից ու չի կարողանում մոտենալ: Երբ մենք մոտենում ենք, այն հեռանում է: Այն մոտիկ լինել չի կարող: Մենք բոլորս շագանակագույն ու

դեղին ենք, սև մազեր, ճերմակ ատամներ ու կարմիր արյուն ունենք: Մենք մնացողներն ենք: Դուք, որ երկնագույն աչքեր ունեք, ավետավորներ եք հեռու-հեռվից, դուք մնալ չեք կարող, և հիմա ժամանակն է, որ դու վերադառնաս:

— Ո՞ւր,— հարցրեց կինը:

— Հեռաստաններ՝ դեպի արևն ու անձրևների կապույտ մայրը, և ասես նորից, որ կրկին մենք ենք երկրի տերերը և վերստին կարող ենք արևը լուսնի մոտ բերել, ինչպես կարմիր ձիուն՝ կապույտ զամբիկի, մենք ենք տերերը: Ճերմակ կանայք երկնքում ետ են քշել լուսնին և թույլ չեն տալիս, որ մոտենա արևին: Դրա համար արևը բարկացել է: Իսկ հնդկացին լուսնին պետք է արևին տա:

— Ինչպե՞ս,— հարցրեց կինը:

— Ճերմակ կինը պետք է մեռնի, քամու պես արևի մոտ գնա ու ասի նրան, որ հնդկացիները բաց կանեն դարպասը: Իսկ հնդկացի կանայք բաց կանեն դարպասը լուսնի առջև: Ճերմակ կանայք թույլ չեն տալիս, որ լուսինն իջնի կապույտ մարջաններից: Լուսինը սովորություն ուներ իջնել հնդկացի կանանց մոտ, ինչպես ճերմակ այծը ծաղիկների մեջ: Իսկ արևն ուզում է իջնել հնդկացի տղամարդկանց մոտ, ինչպես արծիվը՝ եղևնիների: Արևը փակված է ճերմակ մարդու, իսկ լուսինը՝ ճերմակ կնոջ թիկունքում, և նրանք դուրս պրծնել չեն կարողանում: Նրանք չարացած են, աշխարհում ամեն ինչ ավելի է չարանում: Հնդկացին ասում է, որ եթե ճերմակ կնոջը արևին տա, արևը կցատկի ճերմակ տղամարդու վրայով ու նորից կգա հնդկացու մոտ: Իսկ լուսինը կզարմանա, կտեսնի բաց դարպասը և չի իմանա, թե որ կողմ գնա: Բայց հնդկացի կինը կկանչի լուսնին. «Ե՛կ: Ե՛կ: Վերադարձիր իմ մարգագետինները: Չար ճերմակ կինը այլևս չի կարողանա վնասել քեզ»: Այդ ժամանակ արևը կնայի ճերմակ տղամարդկանց գլուխների վրայով և մեր կանանց արոտավայրերում կտեսնի Կարմիր Մարդկանցով՝ ասես սոճիներով շրջապատված լուսնին: Հետո նա կցատկի ճերմակ տղամարդկանց գլուխների վրայով և եղևնիների միջով դեպի հնդկացիները կվազի: Եվ մենք, որ կարմիր ենք, սև ու դեղին, մենք՝ մնացողներս, արևը կբռնենք աջ ձեռքում, լուսինը՝ ձախ: Այսպես կկարողանանք վայր բերել անձրևը կապույտ մարգագետիններից ու վեր տանել՝ սևերից, կկարողանանք կանչել քամուն, որի խոսքով աճում է ցորենը, երբ խնդրում ենք, կստիպենք պայթել ամպերին և ոչխարներին՝ զույգ գառներ ծնել: Եվ գարնանային օրվա պես հզոր կլինենք: Բայց ճերմակ մարդկանց համար դժվար ձմեռ կլինի՝ առանց ձյան...

— Բայց,— ասաց ճերմակ կինը,— ես լուսինը չեմ փակել, ինչպե՞ս կարող եմ...

— Այո,— ասաց տղամարդը,— դու փակել ես դարպասը ու հետո ծիծաղել, կարծելով, թե արել ես ուզածդ:

Կինը մինչև վերջ չէր կարողանում հասկանալ նրա նայվածքը: Տղամարդը միշտ արտասովոր սիրալիր էր ու անչափ մեղմ ժպիտ ուներ: Մինչդեռ աչքերը սաստիկ փայլատակում էին, իսկ բառերից սաստիկ դաժան ատելություն էր զգացվում, տարօրինակ, բացարձակ, անանձնական ատելություն: Կինը համոզված էր, որ անձամբ ինքը նրան դուր է գալիս: Տղամարդը սիրալիր էր, մի տեսակ տարօրինակ, նուրբ, անկիրք ձևով հրապուրված: Բայց անձից վերանալով՝ նրա նկատմամբ մի տեսակ խորհրդավոր ատելություն էր տածում: Ժպիտով կնոջը զինաթափ էր անում: Մինչդեռ, եթե հաջորդ պահին կինն անսպասելիորեն նրան էր նայում, աչքերի մեջ տեսնում էր մաքուր ատելությանը հաջորդած փայլը:

— Մի՞թե ես պետք է մեռնեմ ու արևին տրվեմ,— հարցրեց կինը:

— Մի օր,— խուսափողաբար ծիծաղեց տղամարդը:— Մի օր բոլորս էլ մեռնելու ենք:

Կնոջ նկատմամբ սիրալիր էին ու շատ հոգատար: Տարօրինակ մարդիկ էին թե ծեր քուրմերը, թե երիտասարդ կասիկը, կանանց պես հսկում ու հոգ էին տանում: Նրանց մեղմ, դավադիր փոխըմբռնման մեջ ինչ-որ կանացի բան կար: Մինչդեռ արտասովոր փայլող աչքերը և ինչ-որ բան թաքցնող փակ բերանները, մանր, ամուր, ճերմակ ատամները

ցուցադրող լայն ծնոտները արուներին հատուկ ինչ-որ շատ միամիտ ու դաժան բան ունեին: Ձմռան մի օր, երբ ձյուն էր գալիս, կնոջը մեծ տան ընդարձակ ու մութ մի սենյակ տարան: Մի անկյունում, բարձր պատվանդանին, հում աղյուսից պատրաստած մի տեսակ ծածկի տակ կրակ էր վառվում: Կրակի լույսի ներքո կինը տեսավ գրեթե մերկ քուրմերի փայլող մարմինները և սենյակի առաստաղի ու պատերի տարօրինակ խորհրդանիշները: Սենյակը դուռ կամ պատուհան չուներ, իրենք աստիճաններով երդիկից էին իջել: Իսկ եղևնու փայտով վառված կրակի լեզուներն անվերջ պարում էին, լուսավորում կնոջ համար անհասկանալի, տարօրինակ պատկերներով պատերն ու մարդակներով ծածկված առաստաղը՝ սև, կարմիր ու դեղին տարօրինակ նախշեր նետելով, մահճախորշերը, թե որմնախորշերը, որոնց մեջ տարօրինակ իրեր կային, որոնք կինը զանազանել չէր կարողանում:

Ավելի տարեց քուրմերը կրակի մոտ հնդկացիներին հատուկ լռությամբ ինչ-որ արարողություն էին կատարում: Կնոջը նստեցրին պատի ցածր ելուստին, կրակի դիմաց, կողքին երկու տղամարդ: Հաջորդ պահին նրան բաժակով ըմպելիք մեկնեցին, որը նա ուրախությամբ ընդունեց, քանի որ այն կիսաանդենական վիճակ էր ստեղծելու:

Մթության ու լռության մեջ նա կատարելապես զգում էր իր հետ կատարվածը՝ թե ինչպես հանեցին հագուստը և պատի կապույտ, սպիտակ, սև, հսկայական ու անիմաստ պատկերների առջև կանգնեցնելով՝ ոտից գլուխ օսլայաջրով լողացրին, անգամ մազերը լվացին՝ սրբորեն, խնամքով, ճերմակ լաթով այնքան չորացրին, մինչև փափկեցին ու փայլ ստացան: Հետո պառկեցրին մեկ ուրիշ հսկա, անմեկնելի, կարմիր, սև, դեղին պատկերի մոտ դրված թախտին և անուշաբույր յուղով շփեցին ողջ մարմինը, բոլոր ծայրանդամները, մեջքը, կողերը, մերսեցին երկար, տարօրինակ, հիպնոսացնող մերսմամբ: Նրանց թուխ ձեռքերը զարմանալի ուժ ունեին, մինչդեռ նուրբ ու խոնավ, ինչը կինը ըմբռնել չէր կարողանում: Իսկ ճերմակ մարմնի վրա հակված թուխ դեմքերը մգացված էին կարմիր գունանյութով, այտերի շուրջը՝ դեղին շրջանակներ: Մթին աչքերը կլանված բոցկլտում էին, քանի դեռ ձեռքերն աշխատում էին կնոջ փափուկ, ճերմակ մարմնի վրա:

Նրանք այնքան անկիրք էին, ինչ-որ բանով կլանված, որ կինը նրանց հասկանալ չէր կարողանում: Նրա մեջ բոլորովին կին չէին տեսնում, ինքը դա զգում էր: Ինքը նրանց համար ինչ-որ խորհրդավոր իր էր, կրքերի առարկա, իր համար անհասկանալի մի բան: Անդինում նա դիտում էր իր վրա հակված, թուխ, թափանցիկ, կարմիր ներկից արտասովոր փայլ արձակող, դեղին գույնով երիզված դեմքերը: Եվ կենդանի դեմքի այս արտասովոր, փայլ արձակող մուգ դիմակի աչքերը փայլում էին անընդհատ ու մշտապես, իսկ կարմիր ներկած շուրթերը գոցված էին բացարձակ, չարագուշակ, տխուր մռայլությամբ: Խորքից եկող անսահման տրտմություն, ծայրահեղ որոշում ընդունածների չարագուշակություն, հաստատ որոշված վրեժ, հաղթանակել պատրաստվողների ծնունդ առնող հրճվանք,— սրանք էր կարդում կինը նրանց դեմքերին, քանի դեռ պառկած էր, ու սահմռկեցուցիչ, թուխ ձեռքերը շփելով փայլատ էին դարձնում մարմինը: Վերջապես ծայրանդամները, միսը, անգամ ոսկորները կարծես տարածվեցին մի տեսակ վարդագույն մշուշում, որտեղ գիտակցությունն արևի շողի պես ճախրեց շառագունած ամպի մեջ:

«Կինը գիտեր, որ շողը կմարի, ամպը մոխրագույն կդառնա: Բայց այդ պահին չէր հավատում: Կինը գիտեր, որ ինքը զոհ է, որ իր վրա թափած այս ողջ մանրակրկիտ աշխատանքն իրեն զոհաբերելու համար էր: Բայց նա դեմ չէր: Նա այդ ուզում էր:

Ավելի ուշ նրան կարճ, կապույտ շապիկ հագցրին, վերևի հարթ տանիքը տարան և մարդկանց ներկայացրին: Նա տեսավ, որ ներքևի հրապարակը լի էր թուխ դեմքերով ու կայծկլտուն աչքերով: Խղճահարություն չկար, միայն արտասովոր դաժան հրճվանք: Նրան տեսնելով՝ մարդիկ խուլ ճիչ արձակեցին, և կնոջ մարմնով դող անցավ: Բայց նրա համար գրեթե միևնույն էր:

Հաջորդ օրը վերջինն էր: Կինը քնեց մեծ տան սենյակներից մեկում: Այգաբացին նրա վրա ծոպավոր, լայն կապույտ թիկնոց գցեցին և մուգ թիկնոցավոր, անխոս տղամարդկանց բազմությամբ շրջապատված՝ հրապարակ առաջնորդեցին: Գետինը ծածկված էր մաքուր, ճերմակ ձյունով, և մուգ շագանակագույն թիկնոցավոր, թխամորթ տղամարդիկ ուրիշ աշխարհի բնակիչների էին նման:

Դանդաղ թմբկահարում էր մի մեծ թմբուկ, և մի տան կտուրից ճառում էր մի ծեր քուրմ: Արդեն կեսօր էր, երբ հայտնվեց պատգարակը, և մարդիկ անչափ հուզված, խուլ, կենդանական ճիչ արձակեցին: Պարկաձև պատգարակում նստած էր զառամյալ կասիկը, նրա ճերմակ մազերը հյուսված էին սև ժապավենով ու փիրուզներով: Դեմքը հրաբխային ապակու կտոր էր հիշեցնում: Նա ձեռքով նշան արեց, և պատգարակը կանգ առավ կնոջ առաջ: Աչքերը կնոջը հառելով՝ ծերունին խուլ ձայնով մի քանի վայրկյան խոսեց: Ոչ ոք չէր թարգմանում:

Ուրիշ պատգարակ եկավ, և կնոջը տեղավորեցին նրա վրա: Առջևից գնում էին ալ կարմիր, դեղին ու սև հագած չորս քուրմեր՝ գլուխները փետուրներով զարդարած: Ետևից գալիս էր ծեր կասիկի պատգարակը: Հետո փոքրիկ թմբուկները թմբկահարեցին, ու երգողների երկու խումբ միաժամանակ սկսեց արական վայրենի երգեցողությունը: Եվ կարմրասկեգույն, գրեթե մերկ, ծիսական փետուրներով զարդարված, փեշեր հագած, գետի նմանվող սևաթույր մազերը թիկունքներին թափած տղամարդիկ երկու շարք կազմեցին ու պարաքայլ սկսեցին: Այսպես դոփելով նրանք թելի պես ձգվեցին ձյունածածկ հրապարակով, երկու երկար, շքեղ շարք կազմած, մուգ կարմիր, ոսկեգույն, սև ու մորթիներով զարդարված, ճոճվելիս խեցիների ու կայծքարի կտորները թեթևակի զրնգացնելով, թմբուկի շուրջը երգող տղամարդկանց երկու մեղվապարսերի միջև՝ գալարվելով ձյան վրա:

Նրանք դանդաղ դուրս եկան հրապարակից, և կնոջ պատգարակը փետրազարդ, սարսափազդու, պարող քուրմերի ուղեկցությամբ շարժվեց նրանց ետևից: Բոլորը պարին համաքայլ էին գնում, նույնիսկ պատգարակակիրները: Եվ հրապարակից դուրս, ծխացող վառարանների կողքով գնացին կապույտ երկնքի հենքին արծաթամոխրագույն ժապավեններ թվացող, ձյան վրա մերկ ու սլացիկ կանգնած. հսկա կաղամախիների կողմը տանող շավղով: Բարակած գետը սառույցի ճիրանների միջով էր հոսում: Պարտեզների շախմատաձև քառակուսիներն ու ցանկապատերն ամբողջովին՝ ձյունածածկ էին, և ճերմակ տները հիմա դեղնավուն էին թվում:

Ողջ հովիտը, մինչև կանգուն ժայռի պատերը, սաստիկ փայլում էր մաքուր ձյունից: Եվ հարթ ձյունաթմբի միջով, դանդաղ ու պերճաշուք ճոճվելով, գալարվում էր պարի երկար, նարնջագույն ու սև թելը: Ուժեղ թմբկահարությունն արագացավ, և թափանցիկ, սառած օդում վայրենիների աղաղակն ու ոռնոցը մոլեգնության նմանվեց:

Պատգարակում նստած կինը դուրս էր նայում զարմանքից մեծացած անթարթ, երկնագույն աչքերով, որոնց տակերը սևացել էին հոգնածության թմբիրից: Նա գիտեր, որ ձյան փայլի մեջ էլ մեռնելու էր այդ վայրենի, պերճափայլ մարդկանց ձեռքով: Եվ երբ նայեց շերտավորված ու հսկա սարի գլխի պայծառ, կապույտ երկնքին, մտածեց. «Ես արդեն մեռած եմ: Ի՞նչ տարբերություն, եթե շատ շուտով «մեռած եմ» վիճակը կփոխվի «մեռնելու եմ» վիճակի»: Մինչդեռ նրա հոգին դառնանում էր ու ճնշվում:

Տարօրինակ թափորն անընդհատ պարելով դանդաղ առաջ էր շարժվում հարթ ձյան միջով հայտնվեց սոճուտի արանքի թեքության վրա: Կինը տեսնում էր պղնձագույն ծառաբների արանքով պարաքայլ ընթացող պղնձադեմ տղամարդկանց: Եվ վերջապես, իր ճոճվող պատգարակով, ինքն էլ հասավ սոճիներին:

Նրանք շարունակ առաջ էին շարժվում, ծառերի տակի ձյան միջով, գունատ, շերտավոր պղնձի հարուստ հանքերի կողքով դեպի վեր, և թելի պես ձգվող պարի խշշոցը, շարժումն ու քայլքը թափանցում էր անտառ ու սար: Նրանք գետի հունով էին գնում, բայց գետակը ցամաքած էր, ինչպես ամռանը, ցամաքել էր ակունքի սառցակալումից: Խռնված մազեր հիշեցնող մուգ կարմրաբրոնզագույն ընձյուղներով ուռենու թփեր կային ու ձյան վրա սառած մարմինների նմանվող գունատ կաղամախիներ: Հետո՝ դուրս ցցված, մռայլ ժայռեր:

Վերջապես կինն զգաց, որ պարողներն այլևս առաջ չեն շարժվում: Նա ավելի ու ավելի էր մոտենում թմբուկներին, ասես խորհրդավոր կենդանիների որջի: Հետո թփերի միջով մի տարօրինակ ամֆիթատրոնում հայտնվեց: Դիմացը ներս ընկած ժայռի մի հսկա պատ էր, որի առջևի մասում կախ էր ընկել մի հսկա, կաթկթող, ժանիքաձև սառցալուլա: Սառույցը

վերևի զառիթափից ցած էր գահավիժում ժայռի վրայով և բանտարկվել, մնացել էր բարձր երկնքից կաթկթելով գրեթե մինչև ներքև՝ փոս ընկած քարերը, որտեղ պետք է գետահունը լիներ: Բայց հունը ցամաք էր:

Ցամաքած հունի երկու կողմերում արդեն կազմվել էին պարողների շարքերը, և պարը շարունակվում էր առանց ընդհատվելու, թփերի հենքի վրա:

Բայց կինն ընկալում էր միայն վերևում՝ մռայլ զառիթափի շուրթից կախված ժանիքաձև, գլխիվայր սառցաժայռը: Իսկ հսկա սառցասյան ետևում ժայռի փոս ընկած մակերեսով դեպի քարանձավը, որը ժայռի մեջտեղի մասում մութ խորության նմանվող խորշանցք ուներ, մագլցող քուրմերի ընձառյուծանման մարմիններն էր տեսնում:

Նախքան կինը կկարողանար գիտակցել, պատգարակակիրներն արդեն երերուն քայլվածքով ժայռն ի վեր էին մագլցում: Կինն էլ հայտնվեց սառույցի ետևում: Ահա այն, չբացված վարագույրի պես: Հսկա ժանիքի պես: Իսկ ոչ հեռու, գլխավերևում, ժայռի մեջ մտած քարանձավի մթին անցքն էր: Նա աչքը չէր կտրում դրանից, քանի դեռ ճոճելով վեր էին բարձրացնում իրեն:

Անձավի հենահարթակին սպասման մեջ կանգնած շքեղ փետուրներով ու ծոպավոր շապիկներով քուրմերը նրա վերելքն էին դիտում: Նրանցից երկուսը կռացան պատգարակակիրներին օգնելու: Եվ վերջապես կինը հայտնվեց անձավի հենահարթակին, սառցասյան հակառակ կողմում, բավական հեռու, ներքևում՝ որտեղ պարում էին տղամարդիկ և լուռ հավաքվել էր ողջ գյուղի բնակչությունը, թփերի մեջ առաջացած ամֆիթատրոնի վերևում:

Արևը ձախ էր թեքվում կեսօրվա երկնքում: Կինը գիտեր, որ դա տարվա ամենակարճ օրն է ու իր կյանքի վերջին օրը: Նրան դեմքով դեպի ծիածանափայլ սառցասյունը կանգնեցրին, որը զամրանալիորեն բանտարկված կախվել էր նրանից հեռու՝ առջևում:

Ազդանշան տրվեց, և ներքևում պարն ընդհատվեց: Հիմա բացարձակ լռություն էր տիրում: Կնոջը մի քիչ ըմպելիք տվեցին, հետո երկու քուրմեր ուսերից վերցրին թիկնոցը, հանեցին շապիկը և արտասովոր գունատ կինը կանգնեց այնտեղ՝ քուրմերի բոսորագույն շապիկների կողքին, սառցասյան հակառակ կողմում, թխադեմ մարդկանցից հեռու ու վերևում: Ներքևի բազմությունը խուլ, վայրենի աղաղակ արձակեց: Հետո քուրմը կնոջը պտտեց. այնպես որ թիկունքով դեպի ազատ աշխարհը կանգնի, շեկ, երկար մազերը՝ դեպի ներքևում կանգնած մարդիկ: Ու նրանք նորից աղաղակեցին:

Կնոջ դեմքը անձավի ներսն էր նայում: Խորքում կրակ էր վառվում ու բոցկլտում: Չորս քրմեր հանել էին շապիկներն ու գրեթե նույնքան մերկ էին, ինչքան կինը: Նրանք ուժեղ տղամարդիկ էին: Կյանքի ծաղկուն շրջանում և թուխ, ներկված դեմքերը խոնարհված էին պահում:

Կրակի մոտից ծխացող խեժով ամանը ձեռքին եկավ զառամյալ քուրմը: Նա մերկ էր ու բարբարոսական հրճվանքի մեջ: Նա խուլ ձայնով արտասանելով ծխահարեց իր զոհին: Նրա ետևից մեկ ուրիշ անշապիկ քուրմ՝ ձեռքին հրաբխային ապակուց երկու դանակ:

Ծխահարելուց հետո կնոջը պառկեցրին լայն, հարթ քարին, չորս ուժեղ տղամարդ բռնեցին նրա մեկնված ձեռքերն ու ոտքերը: Ետևում կանգնեց մութ ապակիով ծածկված կմախքի նմանվող տարեց տղամարդը, անթարթ հայացքը արևին, ձեռքում՝ դանակ, իսկ նրա ետևում դարձյալ մեկ ուրիշ քուրմ՝ դանակը ձեռքին:

Կնոջ վրա դա նվազ տպավորություն գործեց, չնայած գիտակցում էր, որ այդ բոլորը իսկապես տեղի էր ունենում: Դեմքը դեպի երկինք շրջելով՝ նա նայեց դեղին արևին: Այն մայր էր մտնում: Նրա ու արևի միջև սառցասյունը ստվերի էր նման: Եվ կինը գիտակցեց, որ դեղին ճառագայթները կիսով չափ ողողում են անձավը, չնայած դեռ չէին հասել զանգակաձև խորշի հեռավոր անկյունի կրակարանին:

Այո, ճառագայթները դանդաղ էին սողոսկում: Քանի կարմրում, այնքան հեռու էին թափանցում: Երբ բոսոր արևը մայր մտնելու լիներ, նրա ողջ փայլը սառցասյան միջով անձավի խորշի ամենախորքը կթափանցեր:

Կինը հիմա հասկացավ, որ տղամարդիկ դրան էին սպասում: Անգամ իրեն բռնողներն էին խոնարհվել ու դեմքերը շրջել, նրանց սև աչքերը փայլող ցանկությամբ, երկյուղածությամբ, կրքոտությամբ արևին էին հետևում: Տարեց կասիկը արևից չէր կտրում սև, հայելանման, անթարթ, ասես կուրացած, բայց ձմեռային շառագունող մոլորակին ինչ-որ սոսկալի պատասխան պարունակող աչքերը: Եվ ձմեռային ետկեսօրյա շառագունող, ցրտաշունչ լռության մեջ բոլոր քուրմերի փայլող աչքերը մայր մտնող գնդին էին հառած:

Նրանք հուզված էին, սաստիկ հուզված ու վայրագ: Նրանց վայրագությունն ինչ-որ բան էր պահանջում, և նրանք հարմար պահի էին սպասում: Նրանց վայրագությունը պատրաստ էր հաղթանակի խորհրդավոր հրճվանքի վերածվել: Բայց նրանք հուզված էին:

Միայն ամենածեր տղամարդու աչքերում հուզմունք չկար: Սև, անթարթ, ասես կուրացած, նրանք արևին էին հետևում՝ արևից այն կողմ տեսնելով: Եվ նրանց սև, անարտահայտիչ սևեռման մեջ հզորություն կար, ծայրահեղ, վերացական ու հեռավոր հզորություն, բայց երկրի սրտում ու արևի սրտում խորացած: Բացարձակորեն անշարժ կանգնած՝ նա հետևում էր, մինչև կարմիր արևը սառցասյան միջով ուղարկեր իր ճառագայթը: Այդ ժամանակ ծերունին հարվածելու էր, հարվածելու էր անվրեպ, մատուցելու էր զոհը ու ձեռք էր բերելու հզորությունը:

Այդ հմտությունը այդ մարդը չպետք է կորցներ, և դա սերնդից սերունդ է անցնում: